

ՈՍԿԱՆ ՎՐԴ. ԵՐԵՒԱՆՑԻ

ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

ԼՈՒՍԱԽՈՐ ԷՋ ՄԸ

ԺԷ. ԴԱՐՈՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

(Շար. տե'ս «Բազմավէպ» 1974, ք. 3-4, էջ 259-277)

2

ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻ ԵՒ Շ. ՊՕՂՈՍ ՊԻՐՈՄԱԼԻ

Ոսկան Վրդ. իր կենսագրութիւնը համառօտ կերպով կու տայ Առաքել Դաւրիժեցիի Պատմութեան դրքին մէջ, տպուած Ամսդերտամ, 1669ին, Պատմութիւն Ոսկանայ Վրդ.ի Երեւանցոյ խորագրով (դիտել Մէ) :

Հայերէն Աստուածաշունչի տպագրութեան 300ամեակին առիթով, 1966ին, բոլոր հայ յօդուածագիրներուն եւ ուսումնասէրներուն համար՝ Ոսկանի կենսագրութեան աղբիւրը եղած է Դաւրիժեցիի վերոյիշեալ դիտելը :

Մեր ներկայ հետազօտութեան ընթացքին, պիտի ջանանք ինչ ինչ տուեալներ յաւելուլ այդ տեղեկութիւններուն վրայ, որոնք Ոսկան Վրդ.ի անձին ու դորժունէութեան կը վերաբերին, օգտագործելով Հռոմի եկեղեցական դիւաններուն մէջ պահուած անտիպ վաւերաթուղթերն ալ :

Ոսկան Վրդ. ծնած է 1614ին, Ղլիճենց տոհմէն, Երեւանցի ծընողներէ, որոնք Շահ Աբասի (1585-1629) բռնազաղթով՝ Պարսկաստան փոխադրուած էին 1605ին :

Հօրը անունը Թորոս, մօրը Գոհարազիդ : Երեք եղբայրներ էին՝ Յովհաննէս, Աւետիս, Ոսկան. վերջինս երիցադոյնն էր, ինչպէս կը

Հրատարակութիւն Ս. Ղազարի Հայկական Կանաչի

Publication de l'Académie Arménienne de Saint-Lazare - Venise

Կը հրատարակուի «Գալուստ Կիւլպէնկեան Հիմնադրութեան» նպաստով

Publié avec le concours de la « Fondation Calouste Gulbenkian »

հաստատուի 1660ին տպուած «Յիսուս Որդի»ի Յիշատակարանէն, ուր Աւետիս տպագրողը կ'ըսէ. «Աւագ եղբայր իմ Ոսկան Վրդ-ն»¹:

Ոսկան իր նախնական կրթութիւնը առած է, ըստ դարուն սովորութեան, տեղւոյն քահանայէն: Ասոր տալիք դասերը վերջանալուն, մինչդեռ ծնողները կ'ուզէին կապել Ոսկանը աշխարհիկ կեանքի առօրեայ ճախարակին, ան «յաւէտ տոգորմամբ ըղձայր» ուսման ու եկեղեցական կարգին: Հետեւաբար, ծնողքէն դադարելով, Նոր Զուգայի խաչատուր Վրդ. Կեսարացիի նորարաց դպրոցին մէջ կը մտնէր «սակս ուսման եւ կրօնաւորութեան»:

Ոսկան, ժամանակին ընթացիկ դպրոցական ծրագրին համաձայն՝ հոն ուսաւ Սաղմոս, Շարական եւ Ս. Գրքի մեկնութիւն. յիշատակուած են Պողոս Առաքեալի եւ Կաթողիկոսայց քուրթերը եւ նսայեայ Մարգարէութիւնները:

Մովսէս Վրդ. Տաթեւացի, որ յետոյ եղաւ Մովսէս Գ. Կաթողիկոս (1629-1633), երբ տակաւին սոսկ վարդապետ, Շահ Արապէն 1627ի Յունուար 18ին էջմիածնի լուսարարապետ կարգուեցաւ, ի վարձատրութիւն մօմ սպիտակացնելու իր նոր արուեստին, իր մօտ հրաւիրեց խաչատուր Վրդ. Կեսարացի, որ իր աշակերտն էր: Ու երբ կաթողիկոսական դահլ բարձրացաւ, 1629ի սկիզբը, խաչատուր վարդապետը դէպի Արեւմտեան Անատոլիոյ Պոլիս եւ Լեհաստան ղերկեց՝ նուիրակութեամբ մը. իսկ ինքը, Մովսէս Գ. 1629ին դէպի Սպահան չուեց՝ շնորհաւորելու Շահ Սաֆիին, որ Շահ Արապին յաջորդած էր: Այդ առիթով, նորընտիր Կաթողիկոսը յաջողեցաւ նաեւ Մելքիսեղ Կաթողիկոսին օրերէն մնացած հարիւր թուամանի տարեկան տուրքը ջնջել տալ, տուրք՝ որ էջմիածնի Աթոռին վրայ կը ծանրանար: Նոյն տարուայ աշնան, իր վերադարձին, 15ամեայ Ոսկանը՝ ուշիմ պատանի, հետը տարաւ դէպի էջմիածին:

Հոն, Մելքիսեղ Վրդ. Վժանցի «այր կորովի եւ բանիւրուն, ըզդտողն հանճարոյ բնարանականին մասնաւորաբար», իր հմտութեամբ գրաւեց Ոսկան պատանիին համակրանքը, թէեւ այն ժամանակ՝ Վրժանցի Վրդ-ին հմտութիւնը դեռ չէր վայելեր իր արժանաւոր գնահատումը՝ էջմիածնի վանական չըջանակին մէջ: Մանաւանդ թէ «ամենեքին պարսաւողք էին այնմ արհեստի, որք էին արք երեւելիք, եւ թուէին թէ զոյ գիտութիւն ի նոսին: Նաեւ էին ատեցողք գիտութեան, եւ եպերողք վեհադանցին այնմիկ»: Ինք՝ Ոսկան եւս չկրցաւ օգտուիլ այդ վարդապետէն²:

1. Յիսուս Որդի, տպ. Ամսդերտամ, 1661 (հրտ. Մատթէոս Դպիր Մարեցի եւ Աւետիս Ղլիճնց երեւանցի), էջ 612: Տե՛ս նաեւ «Սիոն» 1966, թ. 2-3, էջ 151: Ունէին կրթութիւնը եղբայր մըն ալ՝ Միրզայիթ, եւ քոյր մը՝ Յուսուսինէ: Յովհաննէս եւ Աւետիս վաճառականութեամբ կը զբաղէին:

2. ԱՌԱՔԵԼ ԴԱՒԻԺԵՑԻ, Պատմութիւն, տպ. Ամսդերտամ, 1669, էջ 631: Մել-

Մելքիսեղ Վժանցիին աստղը փայլել սկսաւ՝ երբ Լեհաստանէն վերադարձաւ խաչատուր Վրդ. Կեսարացիին ու աշակերտը՝ Սիմէոն Զուգայեցիին, հաւանօրէն 1631 տարւոյն առաջին կէսին: Անոնք, Լեհաստանի մէջ իրենց կրած տպաւորութիւններու կարգին, պատմեցին նաեւ թէ ո'րքան ամօթահար մնացեր էին անդամ մը, բանալէճի մը ընթացքին, որ Լվով տեղի ունեցեր էր, «սակս անհմուտ դոյոյն քերականութեան եւ ուսման իմաստասիրականաց արուեստից»: Զէին կրցած ճիշտ պատասխանել հետեւեալ հարցման՝ թէ «վարեմ» բառը բա՞յ էր արդեօք՝ թէ գոյական:

Այն ատեն է որ Մելքիսեղ Վրդ-ին աստղը իր զենիթին բարձրացաւ. իր շուրջը խմբուեցաւ աշակերտութիւնը, որոնց կարգին կար նաեւ Ոսկան ինքը, ինչպէս նաեւ Սիմէոն Զուգայեցիին, ու նոյն ինքն խաչատուր Վրդ. Կեսարացիին: Ուստի, էջմիածնի արեղաներն ալ, որպէսզի չզրկուէին այս գիտնական վարդապետին հմտութենէն, խնդրեցին Մովսէս Գ. Կաթողիկոսէն՝ որ իրենք ալ կարենային ներեւան երթալ, ունկնդրելու համար Մելքիսեղ վարդապետի դասախօսութիւններուն, կամ զինքը ներեւան էջմիածին փոխադրել. ինչ որ Կաթողիկոսը կատարեց:

Բայց որովհետեւ խաչատուր Վրդ. չէր ուզած ներեւան քաղաքէն հեռանալ, Ոսկան եւս համակերպեցաւ մնալ իր վարդապետին մօտ, ու իր երկցադոյն աշակերտակից Սիմէոն Զուգայեցիին զիջաւ որ էջմիածին փոխադրուի, ունկնդրելու Մելքիսեղի դասախօսութիւններուն, այն համաձայնութեամբ՝ որ յետոյ Սիմէոն իր սորվածը աւանդէր Ոսկան պատանիին:

Այսպէս Սիմէոն ուսաւ, կը գրէ միեւնոյն կենսագիրը, Դաւիթ Ներզինացիի Սահմանաց գիրքը, «զՊորփիւրն եւ զՍտորոգութիւն» իսկ «զՊէրիաքմենիասն մինչեւ ի տասնեւչորս պրակն»³:

Բայց երբ Սպահանցիները պահանջեցին խաչատուր Կեսարացիէն, որ իրենց վարդապետն էր, Սպահան վերադառնալ, այն ատեն՝ իր զոյգ աշակերտներն ալ, Ոսկան ու Սիմէոն, հարկադրուեցան հետեւիլ վարդապետին: Սպահանի մէջ, Սիմէոն Ոսկանին աւանդեց ինչ որ ուսած էր Մելքիսեղի մօտ. «Իսկ զմնացեալսն ի Պէրիաքմենիա-

քիսեղ Վրդ. Վժանցի իր դասախօսութիւնները սկսած էր 1630ին, Մովսէս Գ. Տաթեւացիի բացած Ս. Անանիայի Անապատը, Երեւանէն ոչ շատ հեռու: Դասախօսութեան նիւթերն էին Դաւիթ Սահմանաց գիրքը, Պորփիւրի Վերլուծութիւնը, Արեւմտէլի Ստորոգութիւնը, Պէրիաքմենիաս, Աշխարհացն, Առաքիւնութեան, ու Դաւիթ Անյաղթի Վերլուծականը, Քերականութիւն եւ Տօմարապագ: Տե՛ս ԱԿԻՆԵԱՆ Հ. Ն., Մովսէս Գ. Տաթեւացի, Վիեննա, 1936, էջ 202-205:

3. ԱՌ. ԴԱՒԻԺԵՑԻ, անդ, էջ 633:

սէն, եւ զքերականութիւն որ ի նախնեաց, ի միասին շինեցին. զի եւ սա կարի արագամիտ էր»⁴

Երբ Մովսէս Գ. Տաթեւացին վախճանեցաւ (1633 Մայիս 21/31), Ամենայն Հայոց գահին վրայ բարձրացաւ իր աշակերտը՝ Փիլիպպոս (1633-1655), որ յետ կաթողիկոսական օծումին, զոր ընդունեցաւ 1634ի Յունուար 13ին, «գրով» Ոսկանը կանչեց Էջմիածին, ուր կը հիւրասիրէր իբր ռուսացի իտալացի կրօնաւոր մը, Դոմինիկեան Ուխտէն, Հ. Պողոս Պիրոմալլի: Սա, 1631ի Մայիս 31ին, Հաւատաստիւնի ժողովէն, Ուրբանոս Ը. Պապին հրամանով, նախիջեւանի լատինա-հայ թեմը զրկուած էր, եւ 1632ի Ապրիլ 13ին Հայաստան հասած էր: Պիրոմալլի էր «յոյժ կիրթ յամենեան յուսմունս իմաստասիրութեան», կը գրէ Առաքել Դաւրիթեցի, թէ եւ տկար՝ հայերէն լեզուի ծանօթութեան մէջ:

Ոսկան պատանին «թողեալ զամենայն, հետեւեցաւ նմա ամենայն զօրութեամբ»: Սորվեցաւ անկէ քիչ մը լատիններէն լեզու, ապա նաեւ քերականութիւն «լիապէս, զոր թարգմանեաց ի մերս», այսինքն՝ հայերէնի, ու ինքն ալ յօրինեց համառօտ քերականութիւն մը: Ասկէ զատ, ուսաւ նաեւ որոշ չափով երկրաչափութիւն ու աստղաբաշխութիւն, բայց մանաւանդ բնաբանական ու փիլիսոփայական ուսումներ, ու «զգեբիլիսոփայութիւն», այսինքն է «Բնաղանցականը» (méta-physique) եւ աստուածաբանութիւն:

Ոսկան թէ եւ կաթողիկոսական հրամանով աշակերտած էր Հ. Պիրոմալլիին, այնու հանդերձ, Դաւրիթեցիի վերոյիշեալ կենսագրական նօթերուն համաձայն՝ իրեն կարգակից ու միաբանակից եղբայրներուն շրջանակին մէջ սկսած էր անբաղձալի դառնալ: Հետեւինք յիշեալ պատմիչին նկարագրութեան. «Բայց զաշխատութիւնս, հալածանս եւ ստրկութիւնս յովովս կրեաց թէ՛ ի Կաթողիկոսէն, թէ՛ յընկերակցաց իւրոց եւ թէ՛ յազգէս մերմէ եւ թէ՛ ի ստրկագունից աբանց քան զինքն: Քանզի ամենեքեան ի վերայ նորա յարեան իբրեւ ի վերայ օտարի, եւ ոտնհարք եղեն խրոխտալով եւ մեծաբանելով եւ ի տրամաբանութիւնս ձեռնարկելով եւ հակաճառելով՝ զորս ոչ ուսեալ էին եւ ոչ լուեալ, ուր թողից զկրթութիւնն եւ զնեհուն գոլն: Իսկ նա զայսոսիկ տեսանելով, թէպէտ կարի քաջ գիտէր զմարտութիւն եւ զբրտութիւն Հայոց, սակայն անձամբ զփորձ առնլով իմանայր յաւէտ զնախնեաց բողոքեալսն, որք բազմազանաւ եղանակաւ բողոքեն ի մէջ գրոց, յաւէտ եւս թարգմանիչքն վեհք որպէս Մովսէս (Խորենացի) յՈղբս: Իսկ սա ի մէջ ամենից չարակրութեանց եւ յորդակուտակաց հեղեղաց փորձանաց՝ յոչ յուսմեքէ եւ յոչ ուստեքէ տեսանելոյ միութարութեանց, այլ յաւէտ վշտաց եւ պէս-

4. Ամդ, էջ 633:

պէս քամահանաց եւ արհամարհանաց, սկսաւ թարգմանել զուսեալն իւր քերականութիւն ի Դադմադացւոյն (Լատիներէնէն) ի հայս: Զինի սորին զբանս աղօթից եւ զլիտանեայս, նաեւ զէլեմէնքում Լօջիկային (= Տարբիք Տրամաբանութեան). իսկ յետ ժամանակաց երկարածքելոց, մեռաւ Կաթողիկոսն Փիլիպպոս († 1655). նստաւ յաջորդ նմին Տէր Յակոբ Զուղայեցի: Սա եւս սկսաւ խոսել առ ժամանակ ինչ: Իսկ նա (Ոսկան) տեւէր ամենայնի վասն Գրիստոսի, ասելով զբանս Երեմիայի. Ակն կալայց նմա եւ համբերեցից»⁵:

Առաքել Դաւրիթեցի ընդհանուր գիծերով կը խտացնէ հոս Ոսկանի կենսագրականը, 1633/34 թուականէն մինչեւ 1660, կու տայ Մատթէոս Ծարեցիի տպագրական առաքելութեան պատմութիւնը՝ Ամսդերտամ, առանց իջնելու քառորդ դարու վրայ երկարող Ոսկանի կեանքին զանազան փուլերուն եւ մանրամասնութիւններուն:

Բնականօրէն հարց կը դրուի. չուրջ երեք տասնեակ տարիներ, 1634-1663 թուականներուն՝ Ոսկան ո՞ւր էր, ի՞նչ ըրաւ իր քսանամեայ հասակէն մինչեւ իր յիսնամեակը: Ինչո՞ւ ուսման ծարաւի եւ ազգանուէր այս պատանին ու եկեղեցականը՝ իր աղակից ու կրօնակիցներուն քամահանքին նշաւակ եղաւ, նոյն իսկ հալածման: Երէկուան հալածուած ուսանողը եւ արեղան, ի՞նչպէս յանկարծ դարձաւ Ոսկան Վարդապետ, հայ Աստուածաշունչի անդրանիկ հրատարակիչը եւ հայութեան մեծ երախտաւորը:

Այս հարցումներուն պատասխան չունին հայ աղբիւրները, ո՛չ դիւանական, ո՛չ ալ մատենագրական: Մինչդեռ Հռոմի եկեղեցական Դիւաններուն մէջ պահուած վաւերագրութիւնները աւելի հանգամանօրէն կը լուսաբանեն հարցերը: Դաւրիթեցիի ընդհանուր բանաձեւերով զծագրածը, անոնք աւելի մանրամասնութեամբ կը ճշտեն, նոր լրջս սփռելով Ոսկան Վրդ.ի անձին ու գործին վրայ: Թանկագին են անոնք՝ ամբողջապէս ճանչնալու համար այս հայ եկեղեցականին անձը, անոր բացառիկ անհատականութիւնը, ուղղամիտ ու կորովի նկարագիրը, ու հայ հոգեւորականի թաքուն առաքելութիւնները, առանց որոնց Ոսկան Վրդ. չէր յաջողեր մատուցանել իր ժողովուրդին եւ իր եկեղեցիին այն թանկագին ծառայութիւնը՝ զոր մատուց:

Ուստի, նախ քան հիւսելը Ոսկանի կենսագրականը, հարկադրուած ենք համառօտակի ուրուագծել այն դէպքերը՝ որոնք իր երկտասարդ հասակին կարեւոր անկիւնադարձը կը կազմեն: Այդ դէպ-

5. ԱՌԱՔԵԼ ԴԱՎՐԻԹԵՑԻ, ամդ, էջ 634: ԱՐԱ ԳԱԼԱՅԵԱՆ, «Ոսկան Երեւանցի Հայ Տպագրութեամբ մեծ երախտաւորը» յօդուածին մէջ, («Միտ», 1966, Թ. 2-3, էջ 89-104), Ոսկանի Սպահանէ դէպի Էջմիածին անցըը կը գետնէ 1634 թուականին: Իսկապէս, 1634ին ճիշտ վերջերը, Հ. Պիրոմալլի ազատ արձակուեցաւ Ապարանի իր արգելարանէն ու զնաց Էջմիածին՝ Փիլիպպոս Կաթողիկոսի մօտ, որմէ լաւ ընդունելութիւն գտաւ:

քերը սերտորեն կապուած են իտալացի կրօնաւոր՝ Հ. Պօղոս Պիրոմալլիի առաքելութեան, զոր կատարեց Մեծ Հայքի մէջ: Ուստի, հարկ է նախ անցողակի ակնարկ մը տանք Հ. Պօղոս Պիրոմալլիի անձին ու հայութեան մօտ իր կատարած առաքելութեան:

Հ. ՊՕՂՈՍ ՊԻՐՈՄԱԼԼԻ՝ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԵՋ

Հ. Պօղոս Պիրոմալլի ծնած է 1591ին, Իտալիա, Քալապրիա նահանգին Սիտերնոյ գիւղը: Դեռ մանուկ՝ նոյն դաւառին մէջ, Դոմինիկեան կարգին Ս. Գէորգ վանքը մտած է ու կրօնաւոր եղած:

Ուսումները կատարած է Սորիանոյ: Առաքինի, ուշիմ եւ ուսումնասէր աշակերտ, բացի փիլիսոփայական ու աստուածաբանական ուսումներէ, լատիներէնէ եւ յունարէնէ, հմտացեր է արեւելեան լեզուներու ալ, որոնց կարգին նաեւ հայերէնի:

Դոմինիկեան Կարգին մէջ կուսակրօն քահանայ ձեռնադրուած, իր մեծաւորներէն զրկուած է Հռոմի վանատունը, Սրբուհի Մարիամ Միներվա եկեղեցիին յարակից, նոյն Միաբանութեան աստուածաբանական լսարանը, ուր վարած է նաեւ ժամանակ մը իր Ուխտին նորընծայ պատանիներուն վերակացուի փափուկ պաշտօնը:

31 Մայիս 1631ին, Հաւատաստիւրուի Ս. Ժողովը, Ուրբանոս Ը. Պապին հաւանութեամբ, կ'որոշէ առաքել քահանայամեայ Հ. Պիրոմալլին, իր ուժերուն լիութեան մէջ, Մեծ Հայք, մասնաւոր առաքելութեամբ մը: Պիրոմալլի Հայաստան կը հասնէր տարի մը յետոյ, 1632ի Ապրիլի առաջին կէսին: Իրեն յանձնուած էր վարչութիւնը Նախիջեւանի Միաբանոց Եպարքոսներու («Ունիթոս» կոչուած, կամ նաեւ «Ջահկեցիներ») լատինահայ արքեպիսկոպոսական թեմի ընծայարանին, անշուշտ զայն վերանորոգելու ծրագրով: Գուցէ դեռ աւելի ընդարձակ պատասխանատուութիւն մըն ալ յանձնուած էր, որովհետեւ Պիրոմալլի, երբեմն, իր պաշտօնական նամակներուն ներքեւ կը ստորագրէ «Վերատեսուչ միսիոններու ի Հայս»: Սոյն տարին, թեմին արքեպիսկոպոսն էր Տէր Օգոստինոս Բաջենց (1629-1653 Ապրիլ 16), որուն Հաւատաստիւրուի Ժողովը կը հաղորդէր իր որոշումը⁶: Սա, ստացուած հրահանգին վրայ, նորեկ իտալացի միսիոնարը կը զրկէ Միաբանոցներու Ճահուկի վանքը, իբր վանահայր ու տեսուչ Ընծայարան-գալոցին:

1632 Ապրիլ 22 թուակիր նամակով մը, իբր առաջին գիր՝ Հայաստանէն դէպի Իտալիա, Պիրոմալլի իր Կարգին Ընդհ. Մեծաւոր Հ. Գամբանելլային կը յայտնէ, նորընծայ առաքելի ոգեւորու-

թեամբ, իր ինքնավստահ տրամադրութիւնները: Կը գրէ՝ թէ մտած է Նախիջեւանի թեմը, երեքշաբթի օրը ժամը 23ին: Թեմին սահմաններէն մուտքի ժամուն, մայրամուտի հորիզոնին վրայ նշմարած է արտակարգ վերջալոյսի շառայլ մը, զոր ինք կը նկատէ բարենշան երեւոյթ: Յետ մտնելու Ճահուկի վանքը, առանց իսկ ժամանակ կորսնցնելու, ձեռնարկած է բարեկարգական գործունէութեան: Նախ դուրս վտարեցի, կը գրէ, վանքին ծառայութեան համար սահմանուած տանտիկիները, վերահաստատելով փակարանի վանական խիստ կանոնը. հաստատած է հասարակաց ժամասացութեան պաշտօնը, անշուշտ լատին ծէսով, հայ լեզուով, ինչպէս էր Ջահկեցիներու սովորութիւնը: Նմանապէս ծոմապահութիւնը՝ ամէն տեսակ մսեղէն կերակուրներէ հրաժարելով: Դպրոցը ձեռքը առած է չորս աշակերտներով, լատիներէն լեզուի դասաւանդութիւնը վերսկսած:

Այս անդրանիկ գրութեան մէջ արդէն Հ. Պիրոմալլի իր լեռնաքին յանձնուած վանքին տխուր կացութեան նկարագիրը կու տայ, եւ իր այս տեղեկագիրը կը փակէ սապէս. «Ըսէք Սրբազան Պապին՝ որ Հայաստան քանդուած է: Եղբայրները (= Միաբանոց Եպարքոսներու վանքին) սակաւաթիւ են. տգէտ, բարքով անկարգ, նոյնիսկ դայթակղալից. սուրբ խորհուրդները կը վաճառեն եւն... ու միշտ կը դանդաւորեն»: Կը յաւելու նաեւ թէ ինք շատ աղքատ ու կարօտեալ պայմաններու մէջ կը գտնուի. մինչեւ իսկ նամակագրութեան թուղթ կը պակսի. բայց եւ այնպէս վստահ է որ «Եթէ Սրբ. Քահանայապետը նպաստէ՝ պիտի ընեմ չլսուած բաներ: Կարող եմ ընել. մեծ հնարաւորութիւններ ունիմ»: Իր լաւատեսութեան մէջ խանդավառ, կը նախատեսէ մինչեւ իսկ յիսուն նորընծայի սքեմ կարենալ տալ ու վանական կարգապահութիւնը պարտադիր ընել⁷:

Յետոյ օրը, 1632ի Ապրիլ 23ին, Ջահուկի վանքէն, ուրիշ գիրով մը՝ ուղղուած առ Ուրբանոս Ը. կը նկարագրէ Նախիջեւանի հայալատին Ջահկեցի վանականներուն վիճակը, սեւ գոյներով, ինչպէս գրած էր իր Ընդհ. Մեծաւորին:

Արեւմուտքի մէջ, լատին աշխարհի միաբանական կազմակերպութիւններուն վարժ կրօնաւորը, որ միշտ տեսած էր վանական յարկին տակ՝ կարգ կանոն, ուսման սէր, կանոնական ժամերուն՝ հասարակաց պաշտօն ու հոգեւոր կեանքի հրահանգներ, վանահօր դեկավարութեան տակ, ցնցուած կը թուի ի տես այդ ֆոլորին բացակայութեան, այն ատենուան Միաբանոց Եպարքոսներու սակաւաթիւ վանքերուն մէջ, ուր կրօնաւորներու թիւն ալ նուազ էր:

«Պարտիմ ըսել թէ Հայաստան քանդուած, սակաւ են կրօնաւորները, տգէտ, առանց գլխու, դայթակղալի արարքներով լի... չկայ

ոչ փակարանի օրէնքի պահպանում, ոչ հնադանդութիւն եւ...»: Նամակագրին այս տեղեկագրութիւնը կը հայի Նախիջեւանի Զահկեցի վանքերուն, ուր գործելու համար ինք ղրկուած էր: Կրօնաւորներու այս անկեալ վիճակէն, կը դրէ, կրնանք հետեւեցնել նաեւ աշխարհական դասակարգին պայմանը. շատեր, կը դրէ, կը թրքանան. ամուսնալուծութիւնները յաճախակի են, երկրորդ կին մը առնելով, եւ Արքեպիսկոպոսը ատոնց աչք կը դոցէ:

Զահուկի վանքէն վտարեցի, կ'ըսէ, սպասարկող տանտիկինները, փակարանի դռները ամուր փակելով, ինչ որ կաթողիկէ ժողովուրդին շինութիւն պատճառեց, եւ միւսներուն ալ հիացում:

Հուսկ կը դրէ՝ թէ կը յուսայ, նախ քան նոյն տարւոյն Սեպտեմբեր ամիսը, Ընծայարանի մէջ ունենալ քսան աշակերտ, ուր կարգապահութիւնը դեռ աւելի ճշտապահ կերպով պիտի տիրէ: Արդէն իսկ եղած աշակերտութեան լատիներէն լեզու կը դասաւանդէ, զոր կը յուսայ աւարտել տարուան մէջ. ապա Աւետարաններու, Պօղոսի Թուղթերուն եւ Առակաց դրքին բացատրութիւնը: Այս վերջինը բերանացի սերտել տալով:

Հուսկ, Սրբազան Պապէն կը խնդրէ դրամական օգնութիւն, «որպէսզի, կը դրէ, աշակերտները կարենամ ձերբադատել դաշտի աշխատանքէն»: Թուղթն իսկ կը պակսի հոս, կը դրէ, նամակագրութեան համար, որովհետեւ իշխողներուն տուրքերը շատ ծանր են:

Նոյն տարուան 12 Ապրիլի գրութեան մէջ ալ, Զահուկի վանքէն ուղղուած թեմին Առաջնորդ Տէր Օգոստինոս Արքեպիսկոպոսին, վանահայր Պիրոմալլի կը յայտարարէ թէ ինք ղրկուած էր իր հանգիստը ու դիւրը հետապնդելու համար, այլ հոգիներու փրկութեան ծառայելու: Իսկ եթէ Զահուկի վանքը նշանակուած էր իրեն, իբր իր առաքելական աշխատանքին կեդրոն, ատիկա եղած էր վերին կարգադրութեամբ, նոյն ինքն թեմին հովուական շահերուն համար. կը յաւելուր նաեւ թէ Զիտտադինոյ Եպս. ալ, որ կանխապէս իրմէ առաջ այցելած էր Նախիջեւանի լատինահայ թեմը, համաձայն եղած է այդ կարգադրութեան:

Յաջորդաբար, Յունիս 26ին, Երեւանէն գրուած նամակով՝ Ս. Ժողովի Կարդինալներուն ուղղուած – հաւանօրէն դէպի Հռոմ ուղեւոր միսիոնարներուն ձեռքով ղրկուած – կը գեկուցանէ՝ թէ Տէր Օգոստինոս Արքպոս. թէեւ սկիզբը դինք կարգած էր Զահուկի վանքին վանահայր, այժմ հրաւիրած է իր մօտ, Ապարաների վանքը: Պիրոմալլի կը հպատակի հրամանին, ու հոտ կը շարունակէ իր դասերը, յառաջացնելով միանգամայն հայերէնի մէջ իր զարգացումը:

Բայց ահա Արքպոս. շատ համամիտ չէ որ աշակերտները բոլորովին ուսման նուիրուին. տղաքը մի առ մի դէպի դաշտի աշխատանքը կ'ըլլէ, պատճառելով թէ կը բաւէ իրենց հայերէնը. ուրիշ գիտելիքներ աւելորդ են. «Վասն զի այս քրիստոնեաները գիտուն են արդէն եւ սուրբ. դրամի կարօտ ենք մենք, ոչ թէ իմաստութեան»: Արդէն հոս տարուան չորս ամիսները միայն դաս կ'ընեն՝ ձմեռը: Աւելին՝ եթէ Հռոմ ալ պարտադրէ, հնարաւոր չէ, որովհետեւ հարկ է հողը մշակել: Երբ Հ. Պիրոմալլի կը հաղորդէ թէ ուսանողները աւելի ուշ Հռոմ պիտի ղրկուին՝ ուսման համար, Արքեպիսկոպոսը զայրագին քովէն կը վռնտէ գինք, ըսելով՝ չէ կարելի. թէ այս վանքերը իմս են, եւն... ու Հ. Պիրոմալլի վհատած շեշտով մը կ'եզրակացնէ՝ թէ հոս օգտակար ոչինչ հնարաւոր է, եթէ արմատէն չբարեկարգուի, որովհետեւ ամէնքը շահու հետամուտ են, աշխարհական թէ քահանայ. «պարզ նորոնծաները՝ դաշտը կ'անցընեն նաեւ գիշերները, ամբողջ շաբաթներով, առանց սքեմի, առանց պատարագի պաշտամունքին, եւն...»:

Միեւնոյն տարուան ընթացքին՝ 1632ի Յունիս 1ի իր գրութեամբ կը գեկուցանէ, Ապարաների վանքէն, Հռոմի եկեղեցական իշխանութիւններուն, երկրին մէջ տիրող խաւաքական կրօնքի մէկ անիրաւ օրէնքին մասին՝ ընդդէմ քրիստոնէական հաւատքի, ի մասնաւորի հայ քրիստոնէութեան, եւ առհասարակ ընդդէմ հայութեան: Պարսիկներուն օրէնքով, կը դրէ ան, երբ քրիստոնեայ անհատ մը խաւաքական կրօնքին յարի, իր ընտանիքին բոլոր անդամներուն ստացուածքներուն տիրանալու իրաւունք կը ստանայ, մինչեւ եօթը պորտ: Տէր Օգոստինոս Արքպոս. շատ պակսի վտանգներէ զերծ պահելու համար իրենները, կ'արտօնէ որ անիրաւուած ընտանիքին քրիստոնեայ միւս անդամները սուտով մը մերժեն ունենալ խաւաքողին հետ ազգական կապեր: Բայց այսպիսի հնարք մը չի գտնուիր Հ. Պիրոմալլին, նախ՝ որովհետեւ յաճախ անյաջող կը վերջանայ. ապա նաեւ անոր համար՝ որ պրմատական միջոց մը չէ: Ուստի, կ'առաջարկէ Հռոմի բարձրագոյն իշխանութիւններուն՝ որ ջանան իրենց միջամետութեամբ Պարսիկ իշխանութիւններուն մօտ, խափանել այդպիսի օրէնքին գործադրութիւնը:

Յունիս 2ին ուրիշ գրութեամբ մըն ալ, Երեւանէն, ուղղուած Ս. Ժողովի Քարտուղար՝ Գրպո. Ժնկովիին, կը կրկնէ խաւաքական անարդար օրէնքին ստեղծած անտեղութիւնները, ու կը շեշտէ անհրաժեշտութիւնը դարմանի մասին խորհելու, կասեցնելու համար հայ ժողովուրդին խաւաքումը: Կ'ափսոսայ նմանապէս պակասը, Զահկեցի կաթողիկէ եկեղեցիներուն մէջ ալ քարոզատուութեան, քրիստոնէական վարդապետութեան հրահանգներուն: Վասն զի, կը դրէ, կրօնաւորները, որ թիւով 14 անձ են ընդամէնը, «տոգտ են, եւ ուրիշ

8. AP, SOCG, vol. 104, ff. 315-315v.

9. AP, SOCG, vol. 104, ff. 338-338v.

հոգ չունին՝ բայց եթէ դաշտ հերկել ու այդի մշակել: Իբր կրօնաւոր անճանաչելի պիտի ըլլային՝ եթէ, աշխարհիկ տարազին վրայ, որ ունին, վարդարան չկրէին»:

Յունիս 18ի գիրով, դարձեալ Ապարաններէն գրուած, տեղեկութիւն կը ղրկէ Հաւատաստիւնի Ս. Ժողովի Կարգինալներուն, Տէր Օգոստինոս Արքեպիսկոպոսին ինչ ինչ հակականոնական արարքներուն մասին, օրինակ՝ թէ թոյլ չի տար որ, ըստ նախնի սովորութեան, կրօնաւորները ընտրեն իրենց Մեծաւոր մը. կամ թէ չի յարգեր եկեղեցական կանոնները՝ որոնք Ձեռնադրութեան կարգին կը հպին, կամ թէ իրենց մատուցած պատարագի մէջ իրենք իրենցմէ մուծեր են ինչ ինչ երգեր, որոնք խորթ են լատինածէս Պատարագին, քմահաճ նորութիւններ, եւ հուսկ՝ թէ յիշեալ Արքեպ. ը գրաքննութենէ կ'անցընէ առ Ս. Աթոռ ղրկուած նամականին ու կը լըրտեսէ¹⁰:

Այսպէս, Հ. Պիրոմալլիի Նախիջեւան ժամանումին վրայ դեռ երեք ամիսներ չանցած, տարածայնութիւնը կ'աճի իր եւ Արք.ին միջեւ: Վերջինս ոչ միայն կը խափանէ անոր կանոնաւոր դասաւանդութիւնները, այլ կը մերժէ նաեւ քարոզի իշխանութիւն տալ կամ միսիոնարի գործունէութիւն թոյլատրել: Եւ ահա, Պիրոմալլի կը հեռանայ Արք.ին թեմէն, Հռոմ վերադարձի սպառնալիքով, ու կ'անցնի Երեւան, ուրկէ ալ կը գրէ իր նամակը: Ան կը գանգատի՝ թէ Արք.էն կողոպտուած է գրեթէ. կը յաւելու՝ թէ միսիոնարները որ Հռոմ կ'երթան, կրնան վկայել այս մասին: Մինչ այդ, Երեւանի մէջ կը շարունակէ հմտանալ հայերէնի, ծրագրած է վրացերէն ալ ուսանիլ:

Հ. Պիրոմալլի կը հաղորդէ նաեւ՝ թէ կ'ուզէ իր հաշուին վանք մը բանալ, ուր հինգ տարուան դասընթացք մը հաստատելով՝ կազմել «բազմաթիւ երիտասարդ աստուածաբաններ»: Ասկէ մինչեւ Հռոմ ուսանող ղրկել՝ ընտանիքներուն դժուարին կու գայ. թող որ անոնք որ կ'երթան, ընտելացած Խալիլոյ դիւրութիւններուն, կը գրէ, վերադառնալ չեն ուզեր. որովհետեւ հոս՝ գետնախշտի կը ննջեն, հանդերձով. կերածին՝ յաճախ հաց է ու բանջարեղէն, եւ Քառասնորդաց՝ առանց իւղի: Պիտի բաւէր ինծի, կը գրէ, ունենալ իբր օգնական՝ չորս կրօնաւոր Հայրեր, դիտուն եւ հոգեսէր, հայերէնը ես իրենց կը սորվեցնեմ: Երեք Հայրեր որ ունիմ հետս, կ'ըսէ, մէկը՝ միայն պատարագելու ընդունակ է. Եղ. Վլաս, կը սպասէ արեղայ միայն պատարագելու ընդունակ է. Եղ. Վլաս, կը սպասէ արեղայ ձեռնադրուելու՝ որպէսզի դէպի Խալիլա մեկնի. իսկ Հ. Անդրէաս՝ զոր Ջահուկի վանքին մէջ փոխ-վանահայր կարգած էի, կ'ըսէ՝ թէ այս տեղերը «փռանկ», այսինքն՝ Եւրոպացի Հայրերու կարիք չկայ:

10. AP, SOCG, vol. 104, ff. 323, 313-314.

Հուսկ, նամակագիրը կը խնդրէ Գերպո. Քարտուղար Ինկուլիէն՝ չանտեսել «այս երկիրը», այսինքն Հայաստանը¹¹:

Հ. Պիրոմալլիի 1632ին Երեւանէն գրած 26 Յունիս ու 2 Յուլիս թուակիր նամակները կը յայտնեն արդէն փոփոխակ մը իր ծրագիրներուն մէջ: Եւրջ երեք ամսուան ընթացքին ստացած փորձառութիւնը, Նախիջեւանի լատինահայ թեմին մէջ, թօթափել տուած են իր սկզբնական խանդավառութիւնը: Արդէն փոփոխուած բան մը կայ. ան ո'չ Ջահուկի, ո'չ ալ Ապարանների վանքերէն է որ կը գրէ, այլ Երեւանէն: Ի՞նչ արդեօք պատահած էր:

Այս մասին մեզի թանկագին լոյս կը սփռէ իր մէկ նամակը, որ 1637ի գարնան, Մարտ 4ին գրած է. այլեւս ո'չ թէ Հայաստանէն, այլ Վոսփորի ափերէն, ուր մեկուսացած էր առժամապէս, յետ իր անդրանիկ առաքելութեան Հայոց մօտ: Հոն, Պիրոմալլի կու տայ մեզի ամբողջական համայնապատկերը դէպքերուն: Նամակը ուղղած է Ուրբանոս Ը. Պապին: Հոս կ'արտագրենք յիշեալ տեղեկագրին միայն այն անցքը՝ որ կը հայի Հ. Պիրոմալլիի, Նախիջեւանի լատինահայ թեմէն հեռանալուն դէպի Երեւան: Ահա այդ հատուածը.

Հաղիւ ժամանած, կը գրէ, իմ առաքելաւայրը, ներկայացուցի Նախիջեւանի թեմի Արք. Տէր Օգոստինոսին, Հաւատաստիւնի Ս. Ժողովին կողմէ ինծի յանձնուած փակ գրութիւնը, ուր ի միջի այլոց կար նաեւ սա բացատրութիւնը՝ թէ միսիոնար Հայրը կ'առաքուէր իբր տնօրէն Ընծայարանին, եւ թէ այդ նպատակին համար 300 սկուտի նպաստ մը կը սահմանուէր ի պէտս Ընծայարանին: Արք. ը չգտնելով յիշեալ գումարը, կը հարցաքննէ նորեկ միսիոնարը: Ան կը պատասխանէ թէ իրեն չէր յանձնուած այդքան գումար: Բայց Արք. ը աւելի գրութեան հաւատաց, կը գրէ Պիրոմալլի, քան թէ իմ խօսքիս. ու մերժեց վճռապէս որեւիցէ յանձնառութիւն ի հաշիւ դարոց-ընծայարանին: Կը գոհանայ պարզապէս նորեկ կրօնաւորին տրամադրութեան տակ ղենելով Ջահուկի վանքը, ու իբր օգնական՝ երկու կրօնաւորներ կու տայ¹²:

Այս վերջինները, վարժած ապրելակերպի մը՝ որ հեռի էր կրօնաւորական կենցաղի յատուկ կանոնապահութենէն, չըջապալութիւն արտաքոյ վանքին, անհրաման երթեւեկներ, եւն... դժկամակօրէն կ'որդեգրեն այս նորեկ իտալացի վանահօր բարեկարգական մտադրութիւնները: Գանդատներ ու դժգոհութիւն ծայր կու տան ճ նաեւ

11. AP, SOCG, vol. 104, ff. 316-317.

12. Այս 300 սկուտի գործածութեան նպատակին շուրջ ծագած տարածայնութիւնը, Արք.ին ու Հ. Պիրոմալլիին միջեւ, վերջինս կը կրկնէ նաեւ իր Curriculum Vitae տեղեկագրին մէջ, զոր մատուցեր է Հռոմ, 1654ին, դէպքէն շուրջ քառորդ դար յետոյ. եւ թէ ատիկա պատճառներէն մէկը եղած է՝ որուն համար Արք. ը Բաշենց շատ ընթացք չէ տուած Միսիոնարին գործունէութեան:

հաւատացեալ ժողովուրդին ներկայութեամբ, Հ. Պիրոմալլիի դէմ, որ կը դիմէ Արքս.ին, որպէսզի այդ զոյգ մը կրօնաւորները փոխանակէր ուրիշ յարմարագոյններով: Խնդրանքը կը մերժուի Արքս.ին կողմէ, որ ի վերջոյ կը կանչէ Հ. Պիրոմալլին Ջահուկի վանքէն, դալ հաստատուիլ Ապարաների վանքը, ուր էր նաեւ եպիսկոպոսարանը:

Հոս երեւան կ'ելլէ սկզբունքային տարաձայնութիւն մը Արքս.ին ու Հ. Պիրոմալլիի միջեւ: Առաջինը կը պահանջէր որ Ընծայարանի աշակերտները անփոփոխ շարունակէին իրենց դաշտային աշխատանքները, որուն վերջինս կ'ընդդիմանար, զայն անհաշտ գտնելով տղոց դպրոցական պարտականութիւններուն հետ: Արքս.ը կը խոստանար դադարեցնել տալ դաշտի աշխատանքը, եթէ միայն Հ. Պիրոմալլի իրեն հատուցանէր յիսուն սկուտ եւս, որպէսզի անով մշակներ վարձէր՝ փոխանակ աշակերտներու աշխատանքին: Հ. Պիրոմալլի, որ կ'ըսէ թէ արդէն իսկ յանձնած էի Արքս.ին հինգ ձի, քսան սկուտ եւ շատ մը եկեղեցական սպասներ, կը մերժէ իրեն տալ յիսուն սկուտ եւս: Արքս.ին հրահանգը կ'ըլլայ դադարեցնել տղոց դասերը, որպէսզի կարենան ապահովել դաշտային դորձերը: Ասոր հակադրեցութիւնը միսիոնարին կողմէ՝ կ'ըլլայ լքել Նախիջեւանի լատինահայ թեմը ու ապաւինիլ Երեւան:

Հ. ՊԻՐՈՄԱԼԼԻ ՓԱԽՍՏԱԿԱՆ ԴԵՊԻ ԵՐԵՒԱՆ

Այս փախուստը տեղի ունեցած է 1632ի Յունիսի վերջերը, հաւանօրէն. այս մասին կը վկայէ Յունիս 26ին Երեւանէն գրած իր վերոյիշեալ նամակը: Տակաւին Էջմիածնի դահին վրայ կը բաղմէր Մովսէս Գ. Տաթեւացին († 1633 Մայիս 21/31), որուն հիւրը կ'ըլլայ իտալացի միսիոնարը¹³: 1634ին գրուած իր Curriculum Vitaeին մէջ կը յայտնէ թէ սիրալիր ընդունելութիւն գտած է Կաթողիկոսին եւ անոր փոխանորդ՝ Փիլիպպոս Վրդ.ին մօտ: Որով կը յուսայ նաեւ իր հայերէնը կարենալ կատարելագործել:

Հ. Պիրոմալլիի դէպի Երեւան փախուստէն ամիս մը ետք, կ'ընդունէր, կրօնաւորի մը ձեռքով, զոյգ դրութիւններ, զրկուած Տէր Օգոստինոս Արքս.ի կողմէ: Անոնցմէ մէկը՝ իրեն ուղղուած, կը հրաւիրէր զինք իր մօտ վերադառնալ, թէ եղածին վրայ զղջացած էր, եւ թէ իրեն պիտի վերադարձնէր Ջահուկի վանքը՝ ուր սիրուած էր, որպէսզի շարունակէ իր դորձը: Հրապուրիչ խոստումներ, որոնք կրնային քաղցրօրէն արձագանգել փախստական Հօր սրտին մէջ: Երկրորդ նամակը ուղղուած էր Էջմիածնի Վեհափառին, Մովսէս Գ.ին,

13. AP, SOCG, vol. 293, ff. 20-23v.

որմէ կը խնդրէր միջնորդել՝ որպէսզի ետ վերադառնար իրմէ փախուցեալ «փռանկը», որուն, կը գրէր, թոյլ չտալ որ մեկնի մինչեւ Հոռոմ:

Տէր Օգոստինոս Արքս.ը մինչ կը ջանար մէկ կողմէն առաջն առնել Հ. Պիրոմալլիի փախուստին դէպի Հոռոմ, միւս կողմէ՝ նամակով մը, 1632 Օգոստ. 12 թուականով, ուղղուած Ուրբանոս Ը. Պապին, կը փորձէր ինքզինքը չքմեղել յայտնելով շարժառիթը՝ որուն համար Հ. Պիրոմալլին, զոր նուազ յարգալիւր շնորհով «Քալապրիացի Հայրը» կ'անուանէ, Ջահուկի վանքէն ետ կանչած էր Ապարաների վանքը: Վասն զի, կը գրէ, գայթակղեցուց թէ՛ մեր հաւատացեալ ժողովուրդը եւ թէ թուրքերը, քանզի տալով աւերուած եկեղեցի մը, որպէսզի ատոր աղիւսներով փռու մը շինել տար, իտալական ոճով, Ջահուկի վանքին համար: Թուրքերը խօսքեր չըրջեցուցին՝ թէ դանձ կը փնտռէր աւերակներու տակէն. չընկ՝ որ եթէ իշխանին ականջը հասնի, մեզի ծանր գլխացաւ կրնայ պատճառել: Այս Տէր Օգոստինոս Արքս. կը յաւելու. Յետ կանչելուս զինք Ջահուկի վանքէն, իմացայ թէ զիս ալ ամբաստանած է Ձեր Սրբութեան առջեւ՝ թէ ձեռնադրութիւններ կը կատարեմ կանոնական ժամանակէն դուրս¹⁴:

Ուրիշ նամակ մըն ալ, ոչ միայն ժամանակով՝ այլ նաեւ ներշնչանքով մօտիկ նախորդին, Օգոստոս 18 թուակիր, գրուած է Հոռոմ՝ իտալացի Հ. Անդրէաս Մատալոնեցիի կողմէ (P. Andrea da Madalene), զոր Հ. Պիրոմալլի անուանած էր Ջահուկի վանքին մէջ իր փոխանորդը. հոս ներքողեանը կը հիւսուի Արքեպիսկոպոսին խրատակրօն կենցաղին. թէ ամառուան տաքին՝ երեք անգամ կը ծոմապահէ շաքարթը, ցամաք հացով ու հոռոմ բանջարեղէնով միայն անցընելով օրը. թէ եւս վաթսուսամեայ եմ, կը գրէ Ս. Պապին, բարի օրինակ կ'առնեմ տեղւոյս կրօնաւորներէն՝ համեստութեան, աստուածապաշտութեան, անձնազոհութեան, պատրաստական հնազանդութեան եւն...: Ասոնք յաճախ անհաւատներէն հալածուած՝ չարչարանք կը կրեն իրենց հաւատքին համար. մինչդեռ Հ. Պիրոմալլի, որ Ձեր Սրբութեան գրած է, իր ծայրայեղութիւններով շատերը գայթակղեցուց: Ես իսկ, իտալացի, իր պատճառով ամօթահար կը

14. AP, SOCG, vol. 104, f. 329.

Դիտելի է որ Արեւմտեան Լատին եկեղեցւոյ կանոններուն համաձայն, ծիսական տարիին չորս եղանակներուն սկզբնաւորութեան պէտք է կատարուին՝ սոսկաբար՝ եկեղեցական կարգի նուիրուողներուն ձեռնադրութիւնները, զոր կը կոչեն Սրբազան ժամանակ (Sacra tempora). նուիրագործելի, ըստ կանոնաց, նաեւ ծոմապահութեան եռօրեայով մը: Այս չորս շրջաններէն դուրս ալ իբրեւ ձեռնադրող ամբաստանուած է Տէր Օգոստինոս Արքեպիսկոպոսը:

մնամ: Ներկայիս ան բացակայ — անշուշտ որովհետեւ Երեւան փախած էր — աշակերտներուն դասերը ես կ'ապահովեմ¹⁵:

Մինչդեռ Մովսէս Գ. եւ իր Աթոռակալ փոխանորդը կը յորդորէին Հ. Պիրոմալլի վերադառնալ իր Արքեպիսկոպոսին, սա կ'ընդդիմանար, անշուշտ կասկածելով հրաւերին անկեղծութենէն: Հոսկ' 15 օրեր անց, զիջաւ անոնց յորդորներուն, պայմանով որ Արքեպիսկոպոսը յարգէր իր խօսքը. վերադարձաւ Ապարաներ: Այս առիթով՝ Մովսէս Գ. Կաթողիկոսն ալ, նամակով մը, ուղղուած առ Օգոստինոս Արքայս. կը միջնորդէր բարեյօժար¹⁶:

Հ. ՊԻՐՈՄԱԼԼԻ ԿԵՐԱԴԱՐՁԸ ԱՊԱՐԱՆԵՐ ԵՒ ԲԱՆՏԱՐԿՈՒՄԸ

Հաղիւ իր ժամադրաւայրը հասած, Հ. Պիրոմալլի կապանքներով պրկուած՝ զնտանի մէջ կը նետուէր, Ապարաների վանքին մէջ: Ապշեցուցիչ երեւոյթ, անշուշտ, եւրոպացի այս միսիոնարին համար: Թուականը այս դէպքին հաւանօրէն 1632 տարուան Օգոստոս ամսու 12էն առաջ է:

Բանտարկութեան հետեւեալ օրը, Օգոստինոս Արքայս.ին նախադահուութեամբ՝ ատեան կը բացուի, վանքին եկեղեցիին մէջ, ուր դատախազն է վերոյիշեալ իտալացի Դոմինիկեանը՝ Հ. Անդրէաս Մատալոնցի:

Ամբաստանութեան գլուխն է՝ Թէ Հ. Պիրոմալլի տեղեկագիր մը ղրկած է Հռոմ, Սրբղ. Պապին ու Հաւատաստիւնի Ս. Ժողովին, որ պարսաւագիր մըն է ընդդէմ Նախիջեւանի Ունիթոս վանականներուն եւ նոյն ինքն Օգոստինոս Արքայս.ին, եւ ուր՝ ի միջի այլոց՝ դրուած է եղեր Թէ յիշեալ Արքայս.ը ինքզինք Հայաստանի Պապը կը նկատէ:

Վերոյիշեալ ատեանին մէջ, Հ. Պիրոմալլիի դէմ եղած այս ամբաստանութեան կը յաջորդէ ոստիկանական բնոյթ կրող դաւադանահարութիւն, իրմէ յետսկոչում կորզելու նպատակով՝ Թէ դրածները սուտ էին: Այնքան հարուածներ ընդունեցայ, կը գրէ ան, որ մարմինս ամբողջ կուպրի պէս սեւցած էր: Բարեբախտաբար, Հ. Վլաս մը գտնուեցաւ, ազդով Փրանսացի, որ վէրքերս դարմանեց:

Յաջորդ օրը, որոշ ազատութիւն մը կը շնորհուի կալանաւոր միսիոնարին, երբ ան կը յայտարարէ Թէ Հռոմ առաքած իր առաջին տեղեկագրին բոլոր տուեալները ի տեսող չէին, այլ ի լրոյ մի-

15. AP, SOCG, vol. 104, f. 328.

16. AP, SOCG, vol. 104, ff. 330-330v, ուր կայ Մովսէս Գ. Տաթեւացիի հաշտարար միջամտութեան գրուածքին լատիներէն թարգմանութիւնը, որ անթուական է թողուած թարգմանութեան օրինակին մէջ: Անոր հայերէն ընագիրը, դժբախտաբար, չկայ յիշեալ հատորին մէջ:

այն, հիմնուած Հ. Անտոն Պիստիչի բերնէն լսածներուն, որ երկու տարի Ապարաններ բնակած էր:

Կը խորհիմ Թէ Հ. Պիրոմալլի 1632 Օգոստոս 12 թուակիր նամակը, որ Ապարաններէն առաքուած է Ուրբանոս Ը. Պապին, եւ որ կը բովանդակէ հերքումը ցայնվայր Հռոմ հաղորդուած տեղեկութիւններուն՝ Նախիջեւանի լատինահայ թեմին անկեալ վիճակին շուրջ, կալանաւոր միսիոնար Պիրոմալլիի ստորագրութեամբ, իրմէն կորզուած է դաւադանահարութեան տակ, զընտանի մէջ:

Ուրեմն Երեւանէն Ապարաններ վերադարձած պէտք է ըլլայ 12 Օգոստոսէն առաջ:

Դատաստանական կատակերգութիւնը կատարուած է նոյն ինքն ամբաստանեալին նախադահութեամբ, ուր պատուհասակոծ եղած ամբաստանողը՝ հարկադրուած է յետսկոչում ընել՝ այսպէս. «ամիս մը ճահուկի վանքը, 40 օր ալ Ապարաններ կեցած եմ», կը գրէ ան, առ Սրբղ. Պապին, յիշեալ նամակին մէջ. «... դայթակղեցուցիչ բան տեսած չեմ. մանաւանդ Թէ՝ եղբայրները դատալ խոնարհ, բարեպաշտ, հլու... Թէեւ աշխատող կիներ կան վանքը, բայց ո՛չ դարմանք պատճառող բաներ կամ դայթակղեցուցիչ... Հ. Անդրէաս ըսած էր՝ Թէ Ս. Խորհուրդները կը վաճառէին. բայց այդ ճիշտ չէ. հին սովորոյթի մը համաձայն՝ ողորմութիւն է որ կու տան հաւատացեալները, այդ առիթով: Ինք՝ շինուած է եղբայրներու օրինակէն, որովհետեւ Ս. Հաւատքի թշնամիներուն մէջ աստուածային պաշտամունքը կը պահպանեն»¹⁷:

Անտարակոյս, Պիրոմալլիի այս յետսկոչումի գիրը Տէր Օգոստինոս Արքայս. ինք ղրկեց Հռոմ, զուգելով նոյն թուակիր, 1632 Օգոստոս 12, իր ինքնարդարացումի նամակը, զոր վերեւ յիշատակեցինք:

Արդեւիպակումէն եօթը օր ետք, յետսկոչումի յիշեալ գիրը անշուշտ իրմէ կորզելէ ետք, կը խոստացուի իրեն դուրս հանել արգելարանէն, բայց այս խոստումը չի դորձադրուիր. մի գուցէ Հ. Պիրոմալլի փախուստի ճամբան բռնէր դէպի Իտալիա: Ամիս մը յետոյ դարձեալ կը կրէ դաւադանահարութիւն:

1637ի Մարտ 4ի վերոյիշեալ տեղեկագրին մէջ, Հ. Պիրոմալլի կը գրէ Սրբղ. Պապին՝ Թէ 1633ի Յուլիսին, մինչդեռ տակաւին արգելափակուած էր, կերակուրին մէջ թոյն խառնուած է: Նոյն տարուան Օգոստոս ամսուն երրորդ անգամ ըլլալով դաւադանահար եղած է: Բանադրանքի սպառնալիք տրուած է ամէն անոնց դէմ՝ որոնք փորձելու ըլլան յարաբերութեան մէջ մտնել բանտարկեալին հետ, որուն իբր կերակուր՝ հաց ու ջուր միայն կը տրուի. իբր հա-

17. AP, SOCG, v. 104, f. 324.

դուստ՝ վարտիք մը ու բաճկոնակ, մերկ մարմնոյն վրայ, Քալապրիացի այս միսիոնարին՝ որ վարժ էր հայկական բարձրաւանդակի ցուրտ կլիմային: Ձեռքէն յափշտակած են իր թրքերէն մէկ գրութիւնն ալ. բայց Աստուած զրկեց ինծի, կը գրէ, բառարան մը՝ հայլատին, որ 11.000 բառ կը բովանդակէր, եւ անոր միջոցաւ մեծ յառաջադիմութիւն ըրի արդելարանիս մէջ, հայերէն լեզուի¹⁸:

18. AP, SOCG, v. 293, ff. 20-21.

Հ. Պիրոմալլին ձեռքը ինկած բառգիրքը անշուշտ էր՝ «Բառգիրք Հայոց» [= Dictionarium Armeno-Latinum, հրատարակուած Փարիզ, Միլանցի Փրանկիսկոս Ռիվոլայի կողմէ, Ֆրանսայի Լուդովիկոս ԺԳ (1601-1643) – Louis le Juste թագաւորին օրով, Կարդինալ Armand Duc de Richelieuի հրամանով: Երկու հրատարակութիւն ունեցած է, առաջինը 1621 թուին, երկրորդը 1633ին: Մենք այս վերջինը տեսած ենք: Տես նաեւ «Հայ հնատիպ Գրքի Մատենադարանական Յուշակը 1512-1800», տպ. Երեւան, 1963, էջ 10:

1633ի տպագրութեան սկիզբը կայ թագաւորին հրովարտակը, որով կը սահմանէ իր տէրութեան շրջանակին մէջ այն տպարանապետները, որոնց տրուած է արտօնութիւն հրատարակելու՝ Ուրբանոս Ը. Պապին վճիռով բարենորոգուած ծիսական մատենաները, նմանապէս Քրիստոնէական վարդապետութիւն, ու օտար Արեւելեան բարբառներու քերականութիւններ ու բառարաններ:

Յիշեալ «Բառգիրք Հայոց»-ին հեղինակը, Ռիվոլայ, կը հիւսէ նախ դովբը Կարդինալ Տը Ռիշլիոյին իմաստութեան, որ 1624 թուականէն սկսեալ շահած էր Լուդովիկոս ԺԳ-ին վստահութիւնը, եւ որուն Պետութեան մէջ, յետ ապահովելու խաղաղութիւնը, տարածած է, կը գրէ, անոր քաղաքական ազդեցութիւնը մինչեւ Եփրատի ու Տիգրիսի ափերը, եւ ուր կը ջանայ Արեւելի Քրիստոնէութիւնը ազատել բարբարոսներու լուծէն, միութիւն յառաջացնելով՝ քրիստոնէութեան ուղղափառ լոյսին տակ:

Ներկայ բառարանն ալ, կը գրէ, կը հրատարակուի պետական արկղին ծախսով, սոյն նպատակին ծառայելու համար, որպէսզի այս բառգիրքը ձեռնարկ ընելու Արեւելը, այդ դադափարականին նուիրուած մշակներուն:

Հ. Պիրոմալլիի ձեռքը ինկած բառարանը, իր իսկ վկայութեամբ, շուրջ 11.000 բառ ունէր: Ինչ որ կը համապատասխանէ Ռիվոլայի յիշեալ բառարանին բովանդակածին:

Ո՞վ եղած է արդեօք այն անձը՝ որ բանտ նետուած Միսիոնարին ձեռքը դրաւ օրինակ մը ասկէ: Շատ հաւանօրէն այն Ֆրանսացի կրօնաւորը՝ որ այդ արդելարանին մէջ նուիրուեցաւ դարմանելու Հ. Պիրոմալլիին վէրքերը, եւ զոր Պիրոմալլի իր նամականիին մէջ կ'անուանէ Հ. Վլաս, իբրեւ իր միակ այցելուն՝ իր բանտի օրերուն:

Յիշեալ Բառգիրքը չունի գիտական հանգամանք: Ռամիկին բերնէն հաւաքուած հայերէնն է, ոչ թէ գրական աղբիւրներէ, ի պէտս ուղեւորներու, գործի մարդոց, միսիոնարներու:

Հայագէտ Joh. Joachim Schröder ալ ճանչցած է զայն ու կը յիշատակէ իր «Thesaurus Linguae Armenicae» աշխատքն՝ «Արամեան Լեզուի Գանձ» գրքին մէջ, տպուած Ամսդերտամ, 1711ին, ուր կը գրէ ատոր մասին. «Հայ բամիկին բերնէն հաւաքուած... պարսիկ, թուրք բառերով, զուրկ հայկական հարազատութենէ եւ լի սխալներով»:

Իսկապէս հայերէն բառերն ալ յաճախ սխալադիր են, հեռու ամենեւին մերսո-

Քսաներկու ամիս ետք, Հոռմէն, որ տեղեակ կը թուի ըլլալ տըխուր դէպքին, կը ժամանէ Հ. Մատթիա, տեղւոյն վրայ հետազօտելու իրերը: Անոր Ապարաներ ժամանումէն հինգ օր առաջ, զիս ազատ արձակեցին, կը գրէ Հ. Պիրոմալլի: Այս ազատագրումը, Պիրոմալլի իր 1637ի երկարաշունչ տեղեկագրին մէջ, որ Հոռմի Պապին զրկած է, կը վերագրէ անոր միջամտութեան. «Ձեր Սրբութեան հրամանով կատարուած ազատագրումէս յետոյ...», կ'ըսէ, ակնարկելով այս 1632-1634 տարիներու իր բանտարկութեան:

Եթէ մեր միսիոնարին արդելարակումի սկիզբը դնելու ըլլանք 1632ի Օդոստոսին, անոր ազատագրումը կ'իյնայ մերձաւորապէս 1634ի ամառը, Յունիս ամսուն մէջ: Պիրոմալլի ոչ մէկ գրութիւն ունի՝ 1632 Օդոստոս 12ի յետսկոչումի իր գիրէն ետք, ամբողջ 1633-1634 տարիներուն տեւողութեան:

Հ. Պիրոմալլի՝ բանտէն ազատագրուած, կ'իմանայ թէ Հ. Մատթիա, այցելու Հայրը, Հոռմէն նամակ բերած է իրեն, որուն մէջ իբր թէ գրուած ըլլայ որ ինք պէտք է շարունակէր մնալ իր առաքելութեան վրայ: Բայց, նամակին պատճէնը չի՝ յանձնուիր երբեք իրեն՝ Արքս.ին կողմէ, ինչպէս որ յայտնապէս ալ կը դանդատի Պիրոմալլի, Սրբ. Պապին ուղղած իր նամակին մէջ¹⁹:

Մեծ ակնկալութիւններով տոգորուած՝ Հ. Պիրոմալլի այսպէս իր առաջին հիասթափումը կ'ունենար, Նախիջևանի լատինահայ թեմին մէջ: Հոռմ, որ զրկած էր այս միսիոնարը, վերականգնելու ծրարադրով այդ առաքելութիւնը եւ մասնաւորապէս ատոր Ընծայարանը, 1632ի կէսին արդէն տեղեակ էր թէ իրերը փայլուն չէին ընթանար, իրենց բնականոն հունին մէջ չէին, նաեւ յետ Հ. Պիրոմալլիի հոն առաքումին: Բայց Հոռմ հաստատ կը կենար իր որոշումին վրայ՝ յառաջացնելու համար վերանորոգումի ծրագիրը:

Այսպիսի վարուելակերպի փորձէն ետք՝ Հ. Պիրոմալլի չէր կրնար ա'լ շարունակել Նախիջևանի լատինահայ թեմը մնալ: Ուստի իսկոյն հրաժեշտ կու տայ ու կ'ապաստանի Երեւան, Էջմիածնի Փիլիպպոս Կաթողիկոսին մօտ, որ նոր օծուած էր (1634ի Յունուար 13ին), որուն մօտ ընդունելութիւն գտայ, կը գրէ Պիրոմալլի Սրբ.՝

պեան ուղղադրութենէն, այնպէս արտագրուած՝ ինչպէս որ հայ գրական բարբառին անվարժ ականջները կրնային զանոնք իւրացնել ուսման բերնէն:

Այնուհանդերձ, այս բառարանը, արդելարակուած Հ. Պիրոմալլիի միակ սփոփանքը եղած է ու միջոցը, այդ շրջանին, զարգացնելու համար իր հայերէնը: Ինքն իսկ կը գրէ թէ 11.000 բառերն ալ սորված է այդ տխուր օրերուն:

19. AP, SO, v. I (1430-1670), ff. 66-92: Այս վաւերացումը, իր պատմական բովանդակութեան մէջ, գրեթէ ամբողջութեամբ, թարգմանաբար հրատարակուած է այս մենագրութեան մէջ:

Պապին, ինչպես որ այդ մասին Զեր Սրբութեան տեղեկադրած եմ անցեալ նամակովս»²⁰ :

Այս դէպքը ինծի ճամբայ բացաւ, կը դրէ Հ. Պիրոմալլի, իր 1654ի Curriculum Vitaeին մէջ, որովհետեւ նորընտիր Փիլիպպոս Կաթողիկոսը՝ որ տեղեակ էր այս բոլորին, զիս ընդունեցաւ, որպէսզի մէկ կողմէ հայերէնի ծանօթութիւնս զարգացնէի, միւս կողմէ ալ իր կրօնաւորներուն դասաւանդէի: Փիլիպպոսի ուղղութեան հետեւեցան վարդապետներ ու արեղաններ ալ, որոնց ամէնէն փայլունները եղան Կիրակոս եւ Ոսկան, որոնք կ'ուզէին որ ես ըլլայի էջմիածնի ժառանգաւորացի դասաբեմին դուռը: Սուրբան Մուրատին արչաւանքը խանդարեց եւ ամէնքը ցրուեցան: Ու համարձակութիւն առին հակառակորդները:

Սուրբան Մուրատ Դ. 1635ի ամառը յաղթեց Իսմայէլ Շահ Սէֆին ու գրաւեց Երեւանը: Էջմիածնի վանքի բնակիչներուն ցրօնքին յայտնի ակնարկ ունի նաեւ Փիլիպպոս Կաթողիկոս, իր 1640ի Հոկտ. 12ին Լեհահայերու գրած թուղթին մէջ²¹: Երբ արչաւանքին լուրը առինք, կը դրէ Կաթողիկոսը, «զկտակարանս մեր զուռույ կախէաք եւ ի յուս մեր բառնայաք, ո'չ տեղի հանգստեան եւ ո'չ ժամ աղօթից... եւն.» եւ թէ երեք տարի, 1636-39, ուրիշ բանով կարելի չէ եղած իրեն զբաղիլ, բացի աւերածները վերաշինելով:

Հ. Պիրոմալլի պէտք է էջմիածին տեղափոխուած ըլլայ 1634ի ամառը, ու Փիլիպպոս Կաթողիկոսէն ուսուցիչ կարգուած արեղաններուն եւ ժառանգաւորներուն:

Տարի մը ետք, 1635 թուականի Մայիս 6ին երկտող մը կը հասնի Հ. Պիրոմալլիի, բարեկամական չեչտով ու չքմեղանքի արտայայտութեամբ, Նախիջևանի Տէր Օդոստինոս Արքս.էն, տարտամ ակնարկութեամբ մը՝ որ միսինարը իր մօտ վերադառնայ: Յիշեալ դրութեան մէջ, յետ ակնարկելու Հոռոմէն Հ. Մատթիայի ձեռքով հասած նամակին, որուն պատճէնը չէր յանձնուած Հ. Պիրոմալլիին, կը կրկնէ թէ Հ. Անդրէաս եղած էր զխաւոր պատասխանատուն անախորժ անցուղարձերուն, որոնք պղտորած էին իրենց փոխադարձ յարաբերութիւնները. եւ հոսկ կը խնդրէ որ իրեն իմացնէ թէ արդեօք պիտի վերադառնայ՝ թէ ոչ: Այս նամակը կը վերջանայ ողջոյնով մը առ Վեհափառ Կաթողիկոսը, որուն հովանիին ներքեւ կը դրտնուէր այլեւս Հ. Պիրոմալլի. «վասն սիրուն Գրիստոսի մեր կողմա-

20. AP, SOCG, v. 293, ff. 20-21, 22-23^v. տե՛ս ծնթ. թիւ 25: Հ. Պիրոմալլի կ'ակնարկէ իր այն հանգամանաւոր Տեղեկագրին՝ որ Կ. Պոլսէն շրջեց Ուրբանոս Ը. Պապին, 1637 թուականի սկիզբները, երբ կը վերադառնար Արեւելեան Հայաստանի իր առաջին առաքելութենէն:

21. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Կամեմից կամ Տաքեգիրք Հայոց Լեհաստանի..., Վենետիկ, Ս. Ղզ. 1896, էջ 244-246:

նէս շատ ողջոյն հասոյ (sic) երջանիկ Հօրդ Կաթողիկոսին եւ իւրեանց ամենեցուն»²²:

Հ. Պիրոմալլի էջմիածին կը թուի ըլլալ տակաւին 1635ի ամառը, բայց ոչ՝ յաջորդ տարուան սկիզբները: 1636էն ահա՛, պանդուխտի ցուպը ձեռքին՝ Թափառական կը շրջի: Ասիկա կը հաստատէ նոյն տարուան Յունուար 10ին դրուած երկտող մը, իրեն ուղղուած՝ Տէր Օդոստինոս Արքս.էն²³: Հոն, նամակագիրը կը զեկուցանէ նախ թէ ժամանած է Հ. Յովհաննէս Լուքեղէ, Լեհերու Թագաւորէն դեսպան ղրկուած Պարսից Շահին, որուն ինքը նամակագիրն ալ ընկերանալիք է: Ապա կը դրէ. «Իմացայ թէ հոն ուր կը գտնուիս՝ շատ բարիք կ'ընես ժողովուրդին. Աստուած քեզ օգնական կենայ. ապա Կաթողիկոսն խիստ նեղացած է քեզնից, մարդ է ողորկում (= ուղարկում) քեզի բերէ Երէվան. քեզի կամենալիս չեն՝ որ դուն բարի առնես այդ տեղ հալրաթ (= անշուշտ): Եկ մեր երկիրն կամ դնա Գաւայ (= Կաֆա) որ պատրի Զվանն քեզ ի հոն բարի եւ լաւ կուեղունին: Պատրի Զվանն (= Հ. Յովհաննէս Լուքեղէ) քեզ է թուխտ է բերել, թողել այ (= թողել է) Գօրի, մօտ Պատրի Պետրոսին: Եթէ կարես դալ էրէվան, մեզ հասանել, բարի է: Մեք քո առողջութիւնն կամենանք. Աստուած զքեզ ազատէ յամենայն փորձանաց. ամէն: Ողջ լեր ի Տէր: Պատրի Զվանն քեզ շատ բարեւ կանի. կարօտ է քո տեսուլ (= տեսոյն): Գրեցաւ էրէվան, թվին ՌՈՂԶ. ունվարի ժ», որ կը համապատասխանէ 1636ի Յունուար 10ին²⁴:

Ի՞նչ անցած դարձած է որ Հ. Պիրոմալլի՝ Երեւանի 1635ի դրաւումէն յետոյ, երկու տարի տեւող շփոթութիւններէ ետք, Կիրակոս վարդապետի, Ոսկանի, Տէր Զաքարիայի, Կարապետի եւ ընկերներուն խորհուրդով՝ Կ. Պոլիս ապաւինած է 1637ին, ինչպէս կը դրէ իր Curriculum vitaeին մէջ, զոր վերեւ յիշեցինք: Էջմիածինէն դուրս՝ փախստականի հանգամանքին մէջ է, գրեթէ անապահով: Այս հարցումին պատասխանը մեզի կու տայ հանգամանօրէն ուրիշ երկար տեղեկագիր մը²⁵, զոր առաջած է Հ. Պիրոմալլի Կ. Պոլսէն, 1637 թուին, հաւանօրէն Փետրուար 12 թուակիր ընկերացող նամակով մը,

22. AP, SOCG, v. 293, f. 20^v-21.

23. AP, SOCG, v. 293, f. 21-21^v.

24. AP, SOCG, v. 293, f. 21-21^v.

25. Այս Տեղեկագիրը, խաւերէն, իբր տիտղոս ունի «Տեղեկագիր Հայ Առաքելութեան վերակացու Հ. Պօզոս Պիրոմալլիի պատահած դէպքերուն, յետ իր ազատումին»: Այս վաւերաթուղթին մասին տեղեկութիւններ տրուած են բնագրին սկզբնաւորութեան, ծանօթագրութեամբ մը, յաջորդ էջերուն մէջ: Վերակացու Հայ Առաքելութեան կողմէ կը վերաբերի Նախիջևանի լատինահայ թեմին, ուր ղրկուեցաւ Պիրոմալլի:

առ Ուրբանոս Ը. Պապ, նորապետին ղեկավարող թարմութեան տպաւորութեան ներքեւ: Սոյն տեղեկագրին մէջ մենք կը հանդիպինք նաեւ իտալացի այս կրօնաւորին աշակերտներէն ոմանց, որոնց կարգին է Ոսկան Երեւանցի պատանին, Տէր Կիրակոս Երեւանցի եւ ուրիշներ, ու կը հետեւինք անոնց ուսումնաստենչ արկածախնդիր ղեկավարութեանը:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՑՈՒ
Հ. ՊՕՂՈՍ ՊԻՐՈՄԱԼԼԻԻ ՊԱՏԱՀԱՍԻ ԴԵՊԲԵՐՈՒՆ՝
ՅԵՏ ԻՐ ԱԶԱՏՈՒՄԻՆ

[= Relazione de' successi di Fr. P. Pyromalli, Prefetto della Missione Armena, dopo la sua liberazione]

ՄԵԹ. - Հետեւեալ տեղեկագիրը որ ստորեւ լայն մասերով կ'արտագրենք, Հատաստիւթի (ՀՍ.Ի) Ս. Ժողովին դիւանէն հանուած է: Անոր իսկական բնագիրը կը գտնուի SO, vol. 293, fol. 24-31 = Scritture Originali riferite nei Congressi Հաւաքածոյին մէջ: Ս. Վրդ. Թերզեան այս վաւերացութիւն լայն հատուածներ հրատարակեց «Աւետիք» ամսաթերթին 1947ի թիւերուն մէջ (տե՛ս թիւ 3-4, էջ 46-48, թիւ 5-6 էջ 98-100, թիւ 7-8 էջ 137-140), իտալերէն բնագիրէն թարգմանելով:

Բայց ան օգտագործած է յիշեալ Դիւանին SO - Armeni, vol. I (1430-1670), fol. 66-92 օրինակը, որ բուն բնագիրը չէ հեղինակին. այլ անկէ՝ ղեկավար ու խնամուած ընդօրինակութիւն մը, 1654ին կատարուած, Դիւանին գրադիրներէն, ի տես նոյն 1654 տարուայ Ս. Ժողովի մէկ նիստին, ուր տեղեկագրին հեղինակը՝ Հ. Պիրոմալլի առաջարկուած էր կարգինալներու քննութեան, իբր թեկնածու եպիսկոպոսութեան: Այս թղթածրարին յօրինման առթիւ է որ ընդօրինակել տրուած է սոյն տեղեկագիրը, իբր աղբիւր Պիրոմալլիի կենսագրականին:

Մինչդեռ բնագիրը, վերեւ մեզմէ յիշատակուած, SO 293րդ հատորին մէջ կը գտնուի, որուն վրայ գրուած է՝ Armeni - Caldei - Maroniti (1636-1648). այդ տարիներու ընթացքին, սոյն երկիրներէն հասած վաւերացութիւններ են:

Թէեւ բնագրին վրայ չկայ ոչ մէկ թուական, սակայն կը բացատրուի. վաւերացութիւնը ղրկուած է ընկերացող նամակով մը, իբր ներփակ գրութիւն: Նամակը՝ որուն հետ առաքուած է, շատ հաւանորէն 1637 Մարտ 4ին է, ուղղուած առ Ուրբանոս Ը. Պապ, եւ ղրկուած Կ. Պոլսէն, ուր կը գտնուէր Տեղեկագրին հեղինակը՝ Հ. Պիրոմալլի, որ նոյն տարուան սկիզբները, Արեւելեան Հայաստանէն վերադարձին, Պոլիս մտած էր: Գրած է իր ապրած ղեկավարութեան թարմ տպաւորութեան ներքեւ:

Հ. Թերզեան, ընդօրինակութեան տարիին թուականը առած ըլլալով, Պապն ալ՝ որուն ուղղուած էր տեղեկագիրը՝ կը համարի իննովկէնտիս Ժ. Գահանայապետը, մինչդեռ նամակընկալն է Ուրբանոս Ը. Պապը, ինչպէս ըսինք:

Ազատագրուած՝ որուն կ'ակնարկուի տեղեկագրին տիտղոսին վրայ, Նախիշեւանի լատինահայ թեմին մէջ՝ Ապարաների վանքը տեղի ունեցած 1632-1634 տա-

րիներու բանտարկութեան կը հայի, որ միտինարին վրայ շատ յոռի տպաւորութիւն թողած էր:

Հ. Թերզեանին արդատապաժ մասերը բնագրին հետ համեմատելէ յետոյ, մենք կարեւոր դատեցինք լրացնել պատմական ընդթ կրող հատուածները՝ որոնք այդ հրատարակութեան մէջ նկատի առնուած չէին, յաճախ ղեկավարութիւնը տալով՝ քան թէ բառացի թարգմանութեամբ ներկայացնելու նպատակով. այս վերջինները արդէն չակերտուած են: Զգուշացանք կտրատելէ՝ եւ յապաւելէ՝ նաեւ հեղինակին կոպիտ դարձուածքները, խորհելով որ լաւ է ճանչալ նաեւ օտարին դատմաները, իրենց մերկապարանոց ձեւին մէջ, պատմութեան հայելով՝ ազգային ինքնաճանաչումէն չզրկելու համար ընթերցողը:

Ուրեմն, տեղեկագիրը հասցէագրուած է առ Ուրբանոս Ը. Պապ, Սրբազան Հայր կոչումով, ինչ որ գրուածքին մէջ պարբերաբար յիշատակուած է:

«Ձեր Սրբութեան հրամանով կատարուած ազատագրումէս յետոյ, Երեւան հասնելով՝ մենք ընդունելութիւն դտայ Հայոց Պատրիարքէն [= Փիլիպպոս Կաթողիկոսէն], որ զիս հրաւիրեց եւ խնդրեց որ քովը մնայի, ու ինծի կրօնական ամէն դիւրութիւն ընծայեց...»:

Միտինարը անսովոր բարեացակամութեան մը հանդիպած է Կաթողիկոսին մօտ, որ զինք իր աչքերուն լոյսը կը կոչէր, թէ հասարակաց պնակէն կը ճաչէին, թէ զինք իր բոլոր եպիսկոպոսներէն ու վարդապետներէն աւելի նախամեծար կը համարէր, նոյն իսկ ուղած էր զինք եպիսկոպոս օծել:

«Պատուիրեց որ վանքին մէջ, ճաչարանը մեր դաւանանքին դէմ գրութիւններ այլեւս չկարդացուին, եւ Եկեղեցիին մէջ ալ չերգուին Դիոսկորոսի դովասանքի Շարականը եւ Ս. Լեւոնի դէմ հայհոյութիւնները...» եւ թէ ոչ ոք յարուցանէ անհաճոյ կրօնական վէճեր, մանաւանդ թէ օգնեն իրեն՝ հայերէն սորվելու²⁶:

Սակաւատեւ եղած է, սակայն, այս վարուելակերպը: Ղազար վարդապետ, վանահայր Էջմիածնի, մատակարարին ու կարգ մը ծերունիները միացած, կը համոզեն Կաթողիկոսը՝ թէ Հ. Պիրոմալլին եկած է զիրենք փռանկացնելու համար, այսինքն՝ միացնելու Հռոմի Եկեղեցիին հետ: Բան մը՝ որուն երբ իրազեկ դառնային Փ. Հայրի վարդապետները, կրնային զինք դահլէյց ընել:

Կաթողիկոսը, հետեւաբար, կը սկսի պաղիլ Պիրոմալլիէն, ու զաղտ կը պատուիրէ վանականներուն զգուշանալ անկէ, դասերուն չյաճախել. մինչ ընդդիմադիրները կը ջանան զինք բոլորովին հեռացնել:

Հ. Պիրոմալլի կը խուսափի վրդովմունքի առիթներէն, լռելով: Զջմարտութեան ի նպաստ կը փաստարկէ միայն՝ երբոր հարցուվոր-

26. Ակնարկը կը հայի «Ով հրաշալի Յախաիարք» չարականին վերջին յաւելուածական երեք տուններուն, ուր յետ ներքողուելու Դիոսկորոսը, Աղեքսանդրիոյ Պատրիարքը, կը նշովուի Ս. Լեւոն Ա. Պապը ու կը դատապարտուի Քաղկեդոնի Տիեզերական Դ. Ժողովին քրիստոսաբանական բանաձեւումը:

ձի կ'ենթարկուի, միշտ դիմելով Հայ Վարդապետներու վկայութիւններուն, զոր հեշտեալ կը դռնէր Հայ գրչագիրներու ընթերցումով, նաեւ ձեռնառութեամբ վանականներէն ոմանց:

Վեց ամիս այսպէս կը պարապի աղատօրէն, Կաթողիկոսը հովուական այցելութեան ելած ըլլալով: Այդ ժամանակամիջոցին, վանականները այնպէս լաւ կը համոզուին Կաթողիկէ ճշմարտութիւններու մասին, մանաւանդ Քրիստոսի անձին մէջ երկու բնութիւններու անշփոթ միութեան վարդապետութեան, որ իրենց կը թուէր թէ Կաթողիկոսի վերադարձին՝ պիտի իրականանար երկու Եկեղեցիներու միաբանութիւնը: Այդ շրջանին, գրեթե ընթերցումով կը պարապէի, վիճաբանութիւններ կ'ընէի, կը դասախօսէի ալ, կը գրէ Հ. Պիրոմալի, թէպէտեւ հայերէն խօսելու վարժութիւն դեռ չունէի, բայց եթէ թոթովելով միայն:

Պօսելու հրահանգով եւ յարատեւ ընթերցումով՝ նախապէս տըպուած բառարանէն 11.000 բառ սորված ըլլալով բանտին մէջ, գրական լեզուին տիրացայ: Ընթերցումներու ժամանակ 30.000 բառեր հաւաքեցի՝ ճշգրիտ բառարան մը կազմելու համար. տեսայ իրենց բոլոր սխալները, նշանակեցի հեղինակաւոր խօսքերը իրենց վարդապետներուն եւ Տիեզերական վարդապետներուն, հերքելու համար վերոյիշեալ սխալները: Գրեցի մը շարադրեցի՝ Քրիստոսի երկու բնութիւններուն շուրջ, 45 վարդապետական փաստերով, Ս. Գրքի բազմաթիւ հեղինակութիւններով, 200է աւելի մէջերումներով՝ Ս. Կիւրեղ Աղեքսանդրացիէ եւ Եփեսոսի այլ վարդապետներէ, հայ եւ Տիեզերական վարդապետներու շատ մը հեղինակութիւններով, զորս գտայ իրենց գիրքերուն մէջ: Քրիստոսի երկու բնութիւններու վարդապետութեան դէմ իրենց գիրքերէն քաղուած 70 փաստարկութիւններուն պատասխանեցի:

Ապա կազմած է հայերէն Քերականութիւն, ցոյց տալով Հայոց թերի կողմերը՝ նաեւ այս մարդին մէջ:

«Ճամբայ բացի, կը գրէ, Կաթողիկէ ճշմարտութիւններուն, գիշեր ու ցերեկ փաստարկելով բոլորին, վանաբնակ ըլլալին անոնք կամ հիւրեր, որոնք բազմաթիւ էին, վանքը Պատրիարքական Աթոռ ըլլալուն համար»: Եւ այսպէս սիրաշահած է Արիստակէս ու Գրիգոր վարդապետները, որոնցմէ իւրաքանչիւրը կ'ուզէ զինք իր վանքը տանիլ իբր դասախօս: Բայց Կաթողիկոսը ատոր կ'ընդդիմանայ:

1635ին, Յունուարի մէջ, չորս ամսուան բացակայութենէ յետոյ, Կաթողիկոսը կը վերադառնայ (Երեւան), եւ յաջորդ օրը, Աստուածայայտութեան տօնին, ինք առանձին տեսակցութիւն մը կ'ունենայ, յայտնելով իրեն՝ առաջին անգամ՝ իր գլխաւոր ծրագիրը, որուն համար եկած էր հոն: Կ'ըսէ թէ յետ պրպտելու հայ մատենագրութիւնը՝ բոլոր Կաթողիկէ ճշմարտութիւնները հոն գտած է, բայց

խառնուած մոլորութիւններու հետ. օրինակ՝ թէ «Քրիստոսի Մարդկութիւնը՝ իր Աստուածութեան հետ ի յաւիտեանց կը դաւանիք»: Կաթողիկոսը իսկոյն կը մերժէ այդ բանին վաւերականութիւնը: Որուն Պիրոմալի կը յարէ՝ թէ երբ Կաթողիկոսը վերադառնայ էջմիածին, պիտի ապացուցանէ:

Կը յայտարարէ նաեւ թէ «հաւատքի դաւանութիւնը, զոր ամէն գիշեր միասին կ'արտասանէք, բոլորովին լաւ է, բացի մի բնութիւն ասացուածէն», զոր փոխելով կարելի է զրկել Հռոմի մեծ Պապին եւ Լեհաստանի թագաւորին. «այսպէս վերջ պիտի դրուէր ձերիններուն տառապանքին այդ երկրին մէջ»: Կաթողիկոսին պատասխանը կ'ըլլայ. «Ես բան մը չեմ փոխեր իմ նախորդներու սահմանաձեւերէն»: Պիրոմալի կ'աւելցնէ. «Ձեմ ուզեր որ ձեր նախորդներուն որոշումները փոխէք, ընդհակառակն՝ կ'ուզեմ եւ կը խնդրեմ որ նոյնները հաստատէք եւ վերանորոգէք անբեկանելի վճիռով: Ձեր նախորդներուն մէջ, լաւ գիտէք որ գլխաւորը՝ լուսաւորեալ եւ բոլոր Արեւելքի Լուսաւորիչ Ս. Գրիգորն է, ձեր առաջին Կաթողիկոսը՝ եւ Աստուծոյ առաջին սուրբերէն եւ բարեկամներէն մէկը. այս Սուրբին չէք կրնար ուրիշ մը նախադասել»: Եւ կը յաւելու. «Այս Սուրբը սորվեցուց, ինչպէս կը կարդանք Ս. Ոսկեբերանի ներբողեանին մէջ՝ զոր ձեր ճառընտիրները ունին, թէ «Աստուծոյ Որդին մեռաւ մարդկային բնութեամբ, բայց կենդանի մնաց աստուածային բնութեամբ, որովհետեւ երկու բնութիւնները միացած են միեւնոյն Քրիստոսի մէջ»:

Կաթողիկոսը այս փաստերուն վրայ կը հաւանի, ու կը պատուիրէ զանոնք գրի առնել եւ յանձնել իրեն: Հ. Պիրոմալի հրաժեշտ կ'առնէ, էջմիածին կը դառնայ. քանի մը օր յետոյ նաեւ Կաթողիկոսը:

Տեսունընդառաջին՝ Պօղոս Վարդապետ մը, Կ. Պոլսեցի, վանականի մը զրդումով, որուն հետ յաճախ վիճած էր, կը խնդրէ Հ. Պիրոմալիէն որ խօսի դժոխքի մասին: Որովհետեւ Հայերը կ'ուրանան, կ'ըսէ Պիրոմալի, ոչ միայն քաւարանի դոյութիւնը, այլ նաեւ դժոխքը (!): Կը խմբուին բոլոր վանականները, Կաթողիկոսի սենեակին առջեւ, որ ներսէն կ'ունկնդրէ: Պօղոս Վրդ. կ'ըսէ թէ դժոխք դոյութիւն չունի, որովհետեւ Քրիստոս հոն երթալով՝ կործանեց զայն...: Կը համաձայնին որ նախ Վարդապետը խօսի, ապա Պիրոմալի պատասխանէ:

Երբ կարգը Պիրոմալիի կու դայ, կ'ըսէ. եթէ Ս. Գրիգոր այս ձեւով կը հասկնաք, ամէն ինչ կ'եղծանէք. «որովհետեւ կցնանք նաեւ ըսել՝ եթէ Քրիստոս մահը լուծեց, ուրեմն՝ մահ չկայ, ուրեմն՝ պիտի չմեռնինք. եթէ Քրիստոս մեղքը վերցուց, ուրեմն՝ մեղք չկայ. եթէ՝ ընդ նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յերկնաւորս ի Քրիստոս Յիսուս, ուրեմն՝ մենք հիմա յարութիւն առած ենք եւ նստած ենք դրախտին մէջ եւն, ...»:

Յետ մատնանշելու իր խօսակիցին հակասութիւնները, Պիրոմալլի կ'անցնի փաստելու, Ս. Գիրքի վկայութիւններով, դժոխքի դոյութիւնը, ուր կ'երթան անապաշխար հողիները՝ մահէն անմիջապէս ետք: Կը փաստէ վերջին ընդհանրական դատաստանը եւս, բացի առանձնականէն. նաեւ սուրբ հայրապետներէ երեք փաստեր բերելով:

Ի տես այս ջատագովութեան, կը դրէ ան, աշակերտներս կը ցընծային: Ապա կը ներկայանան բոլորը, ի յարգանս, կաթողիկոսին, որ մեծ գոհունակութիւն ցոյց տուած է: Իսկ հակաճառող վարդապետը, Աստուածաշունչը առած՝ կ'առանձնանայ, խորհրդածելու համար յիշեալ վկայութիւններուն վրայ: Երեկոյեան կը ներկայանայ իրեն, հաստատելով թէ դժոխքը կայ, ու կը խնդրէ իրմէ նաեւ Ս. Հաղորդութեան խորհուրդին շուրջ լուսաբանութիւններ, փափաքելով լսել զայն ի ներկայութեան Կաթողիկոսին:

Յաջորդ օրը Հ. Պիրոմալլի կը ներկայանայ Կաթողիկոսին, առանձնակի, երկրորդ անգամ ըլլալով, բացատրելու համար Հայաստանեայց Եկեղեցւոյ տիտղոս վիճակը, իր վարդապետներուն եւ անցեալ Կաթողիկոսներուն անսպասարկանատու ընթացքին պատճառով, որով աշխարհականներն ալ հեռացած են կրօնքի ապրումէն, որուն հետեւանք՝ անհաւատներու տիրապետութիւնը, կ'ըսէ: Բայց, կը յաւելու, Աստուած ներկայիս կ'ուզէ վերականգնել այս Եկեղեցին, Ձեր ու այս վանականներուն միջոցաւ, որոնք իրենց ծոմապահութիւններով, խստակրօն կեանքով ու ժամասացութիւններով փութաջանութեամբ եւ իմացականութեամբ թանկագին ուժեր են:

Ու այսպէս կը հրաւիրէ Կաթողիկոսը անսալ Աստուծոյ կոչին ու գլխաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ վրայ, որպէսզի ձերբազատէ զայն մոլար վարդապետութիւններու արատէն, որոնք ցանուած են իրենց գիրքերուն մէջ: Հոս Հ. Պիրոմալլի կը նշմարէ թէ իր խօսակիցին աչքերը յուզումէն ծանրացեր են: Փիլիսոփոս կաթողիկոս կը յայտարարէ թէ իր պաշտօնին պատասխանատուութիւններով պաշարուած, ինք ի վիճակի չէ ստուգելու դոյն սխալները, իսկ իր վարդապետները անձեռնհաս են:

Պիրոմալլի կ'առաջարկէ անոնցմէ երեք կամ չորս հոգի, լաւագոյնները, կանչել, որպէսզի անոնց պարզէ խնդրական կէտերը: Կը համաձայնին:

Մինչ այդ, Կաթողիկոսը կը կանչէ Պօղոս վարդապետը, ու միասին կ'ելեն եւ կը կեղծեն իրր թէ պարտէզները այցելելու կ'երթան:

Երեկոյեան ուշատես, Պօղոս վարդապետը կը վերադառնայ միտիոնարին մօտ, ու յետ դանաղան հարցումներ ընելու անոր, առած պատասխանները կը հաղորդէ Կաթողիկոսին, որ իր մօտ կը կանչէ Պիրոմալլին ու կը հարցաքննէ՝ թէ որոնք էին իր օգտագործած գիրքերը,

քերը, ի ծանօթութիւն հայ աստուածաբանութեան: Կը պատասխանէ թէ ունի ինչ որ հարկաւոր է, առանց մասնաւորելու:

Յաջորդ առաւօտ, Պօղոս վարդապետ ցնծութեամբ կ'աւետէ Հ. Պիրոմալլին՝ թէ Կաթողիկոսը վարժարան մը կ'ուզէ հիմնել ու զինք կարգել անոր վարժապետ:

Նոյն օրն իսկ կ'արձանագրէի, կ'ըսէ, իրենց գիրքերէն քաղուած մոլորական հատուածները, այն ձեւի տակ՝ զոր ստորեւ պիտի տեսնէ Ձեր Երանութիւնը:

Հ. Պիրոմալլի թէեւ յայտնած էր սոյն մոլար կէտերը աշակերտներուն, բայց զգուշացած էր յիշատակելէ անոնց հեղինակը, այսինքն՝ Գրիգոր Տաթեւացին, քանի որ կը վայելէր մեծ հեղինակութիւն Հայոց մօտ, մինչեւ իսկ, կը դրէ, պատարագին մէջ կը յիշուէր՝ Սուրբերու կարգին:

Այդ մասին թէեւ մտադրած էր Կաթողիկոսին հետ առանձին խօսիլ, սակայն պատեհ առիթը չէր ներկայացած: Աշակերտներէն մին Հ. Պիրոմալլի խուցը կու գայ եւ բռնի կը քաշէ ձեռքէն այդ գրութիւնը: Ապա կու գայ Պօղոս վարդապետը, այլ վանականներու հետ, որոնց կը ստիպուի Պիրոմալլի յայտնել հեղինակին անունը, որ մեծ զարմանք կը պատճառէ անոնց: Տաթեւացին, կ'ըսէ Պօղոս վարդապետ, նման լրբութիւններ դրած չի կրնար ըլլալ: Երբ Պիրոմալլի կը ցուցնէ գիրքը, «ատիկա նոր օրինակ է», կ'ըսեն, ու երկուհարկը տարի առաջ գրուած օրինակ մը կը բերեն. հոն ալ կը գտնեն նոյն գաղափարները: Վարդապետը կը խնդրէ որ Կաթողիկոսին բան չըսուի, եւ ինք իր վրայ կ'առնէ խօսիլ այդ մասին:

Փետրուար 6ին (1635) Ուրբաթ օրը, Կաթողիկոսը կը կանչէ Հ. Պիրոմալլին, պարեգօտի կերպս կու տայ անոր, ու կը խնդրէ որ իրեն տրուի այն գրուածքը՝ զոր քաղած էր հայ գրքերէն, որուն ընթերցումը ահաբեկած էր Պօղոս վարդապետը:

Հ. Պիրոմալլի կը յանձնէ խնդրոյ առարկայ գրուածքը Կաթողիկոսին, որ կը փորձէ պարբերութիւններէն մին պաշտպանել: Հ. Պիրոմալլի կը կոչէ ուրիշ հատուած մըն ալ՝ ի հերքումն Կաթողիկոսին: Այնուհետեւ կը դադրի ամէն խօսք դաւանութեան եւ կամ վարժարանի մը հիմնարկութեան շուրջ: Կաթողիկոսը կ'որոշէ սըրբազրել իրենց գրքերը, եւ առ այս՝ կը հրահանգէ վանքերուն որ իրեն ղրկեն այս գիրքերը: Մեծ թուրքին արշաւը, սակայն, կը խափանէ ձեռնարկը²⁷:

27. Երեւանի վրայ թուրքին այս արշաւը տեղի ունեցաւ 1635ին, երբ Սուլթան Մուրատ Դ. հօր բանակով մը քաղեց Երեւանի վրայ, պաշարեց ու եօթը օրուան մէջ գրաւեց, առանց դիմադրութիւն գտնելու Պարսից կողմէ: Բայց հազիւ տարի մը անց, 1636ի Մարտ 26ին, Շահ Սէֆին վերադարձեց Երեւանը ու Արեւելեան Հայաստանը:

Պօղոս վարդապետ այնուհետև այնքան կը յարի Հ. Պիրոմալլիի ուսուցման՝ որ մինչև իսկ կ'ուզէ մէկ խուցի մէջ բնակիլ: Հ. Պիրոմալլի անոր կը բացատրէ Քերականութիւն եւ հաւատքի ճշմարտութիւններ, անդու, ամբողջ Ապրիլ (1635) ամիսը: Զինք այնքան կը սիրեն աշակերտները՝ որ իր խօսքերը իբր պատգամ կ'ընդունին: Միայն թէ Տէր Ղազարոսը կը շարունակէ մնալ իր դերին մէջ, ըսելով թէ Հ. Պիրոմալլիի լեզուն քաղցր կը հնչէ, խաբելու ծրագրով, թէ մեր վարդապետներուն դէմ է, եւն:

Պիրոմալլի չի յաջողիր զինք սիրաշահիլ:

Մեծ Պահլէն՝ Փոքր Հայքէն կը հասնի Ներսէս վարդապետ մը, որ կը միանայ Տէր Ղազարոսին, համոզելու համար Կաթողիկոսը՝ որ հեռացնէ Հ. Պիրոմալլին: Աւագ Դշ. օրը, Կաթողիկոսը կը խորհրդակցի Ներսէս վարդապետին ու Եպիսկոպոսի մը հետ՝ թէ ինչ ընեն Ֆրանկին: Եպիսկոպոսը կողմնակից կ'ըլլայ Հ. Պիրոմալլիին, ինչպէս շատ անգամներ, բայց Կաթողիկոսը չ'ուզեր Ներսէս վարդապետին անհաճոյ ըլլալ. ուստի, կը հաւանի՝ պատեհ առիթին՝ քաղաքավարօրէն զինք ճամբել: Այս բոլորը Պօղոս Վրդ. կ'իմացնէ Հ. Պիրոմալլիին, ու անոր կ'առաջարկէ Կանճայի վանքը ապաւինիլ, որ Երեւանէն ութ օրուան ճամբայ էր եւ ենթակայ Կաթողիկոսին. հոն կանչել միւս աշակերտները ու 2-3 տարուան դասընթացք մը տալ²⁸:

Յետ որոշում տալու, Պօղոս վարդապետ կը մեկնի՝ որպէսզի զրամ ճարէ, Օգոստոսին՝ Կանճայ իրենց միանալու համար: Այն ատեն, Հ. Պիրոմալլի կը սիրաշահի նաեւ Շոպի եւ Վարդան վարդապետները ու անոնց աշակերտները:

Ասոնցմէ իւրաքանչիւրը կը խոստանար զինք տանիլ իր վանքը, հաւաքել մինչև հարիւր աշակերտ եւ դասաւանդել: Ինք կը զգուշանայ խոստանալէ եւ կը ձգձգէ առժամա, խոհեմութիւն նկատելով չընդարձակել իր գործունէութիւնը:

Էջմիածնի վանքին վանականները վերջացուցած էին Քերականութիւնը: Տրամաբանութեան դասաւանդումին համար՝ արտօնութիւն չկրցան ստանալ Կաթողիկոսէն: Բայց Հ. Պիրոմալլի չի փոխեր իր վարուելակերպը եւ կը շարունակէ միեւնոյն սիրալիր վերաբերումը տածել Կաթողիկոսին հանդէպ: Տրամաբանութեան եզրաբանութիւնն ալ կը բացատրէ, եւ մինչ Պորփիրիի դրքին մեկնութեան

28. Գանձակ, այլադրանքէն Կեմէ կամ Գանջայ կոչուած: Վանքը՝ որուն կ'ակնարկուի, Ղարամուրատայի վանքն է, զոր գրողը կը կոչէ Գարամուրատ: Ղարամուրատայի վանքին ու նոյնանուն Անպատին մասին՝ տե՛ս ՈՍԿԱՆ Հ. ԱՍԳ.՝, Արցախի վանքերը, Վրէնա, 1953 (Աղգ. Մանգ. ձէն), էջ 146-147, 164-166:

պիտի ձեռնարկէր, Մեծ Թուրքը Երեւանը կը գրաւէ եւ ամէնքը կը ցրուին այլեւայլ տեղեր²⁹:

Հ. Պիրոմալլի Կանճա (այժմ Կիրովապատ) կ'ապաւինի, վերել յիշուած հայ եպիսկոպոսին հետ, որուն անունը չի տար, եւ որ երբեմն իրեն եւ իր աշակերտներուն հանդէպ նպաստաւոր դիրք բռնած էր, եւ որոնց Հ. Պիրոմալլի կը շարունակէ Քերականութիւն սորվեցնել եւ կաթողիկէ ճշմարտութիւններ: Զի յաջողիւր սակայն Շոպ. ճամոզել, վասնզի, կը գրէ, Տաթեւացիով տողորուած էր, յամառօրէն անոր կառչած. նաեւ երբ ըմբերանուած՝ անպատասխան մնալու ըլլար, ու նոյնիսկ իր աշակերտներէն մեղադրուէր՝ թէ ինչո՞ւ չ'ուզէր ճշմարտութիւնը խոստովանիլ, կ'ըսէր՝ թէ հայ վարդապետները եւ Տաթեւացին հակառակը կը սորվեցնեն:

Երբ աշակերտները ասիկա Հ. Պիրոմալլիին կը հաղորդէին, սա դեռ աւելի պարզ օրինակներով կը հերքէր ու կը ջանար Եպիսկոպոսը համոզել: Պիրոմալլի կը գրէ այս առիթով. «ստուգիւ չեմ գիտեր թէ ինչպէս ինծի հանդուրժեց երկուքուկէս ամիս»:

Ի վերջոյ կը յաջողի Եպիսկոպոսէն անջատել աշակերտներէն ու մանք, որոնք իրեն կը յարին ու կը գրէ. «Եպիսկոպոսը առանձնացաւ մենաւոր վայր մը, տակաւին հռչակելով իմ անունս եւ գովելով զիս՝ ուրիշներու մօտ»:

Շարաթ մը տեւող վիճարանութիւնը՝ իր եւ յիշեալ Եպիսկոպոսին միջեւ, հետեւեալ նիւթն ունէր. Եպս. կ'ըսէր 1) թէ Քրիստոսի մարմինը յետ Յարութեան՝ աւելի փառաւոր չեղաւ քան յառաջագոյնը. 2) թէ Քրիստոս փառաւոր ծնաւ Կոյսէն, ինչպէս այսօր է երկինքը:

Զինք տրորեցի, կը գրէ Պիրոմալլի, ինչպէս խմորը: Իր իսկ աշակերտներէն մեղադրուած, ան Տաթեւացին ցոյց կու տար միշտ: Ես կը յարէի՝ թէ «պարտաւոր ենք հաւատալու Ս. Եկեղեցւոյ տիեզերական վարդապետներուն, որոնց կարեւորութիւն չեն տար Հայերը: Տաթեւացին անոնցմէ չէ. ընդհակառակն՝ անոնց կ'ընդդիմանայ, ինչպէս ստէպ ձեզի փաստեցի»: Իբր պատասխան՝ «Մենք հայ վարդապետներէն զատ, ուրիշ վարդապետներ չենք ճանչնար»: Հ. Պիրոմալլի, տաքարին Քալապրիացի, կիրք ելած կ'ըսէ. «Ուրեմն՝ ձեր հաւատքը սատանայի՞ հաւատք է»: Այս կէտին, Եպիսկոպոսը զայրագին կ'առաջարկէ որ երկուստեք գրուին կարծիքները թուղթի վրայ ու կրակը նետուին, սխալ նկատուի կարծիքը անոր՝ որուն

29. Դէպքը 1635 թուականին կը պատահի: Երբ Սուլթան Մուրատ, Շահ Սէֆիի ձեռքէն առաւ Երեւանը, շատ հայեր թողուցին քաղաքը: Հ. Պիրոմալլի ալ թողուց Էջմիածինը: Տեղեկադրին ակնարկը կը վերաբերի այս դէպքին: Միսիոնարը Էջմիածին կեցած կ'ըլլայ, ուրեմն, 1634ի ամսուն մինչև յաջորդ տարուան ամառը:

դրույթները այդ: Հ. Պիրոմալլի կ'ընդունի, պայմանաւ որ ատիկա ժողովուրդին եւ Կաթողիկոսին ներկայութեան կատարուի: Եպիսկոպոսը առաջարկը կը մերժէ, զինքն ալ վանքէն կը վտարէ:

Հ. Պիրոմալլի մենաւոր եկեղեցի մը կ'ապաւինի՝ որ տեղւոյն Եպիսկոպոսին ենթակայ էր, եւ որ կ'ապահովէր իրեն նաեւ սնունդ: Բայց միւս Եպիսկոպոսը որ պարտուած ելած էր, կ'ամբաստանէ զինք Կաթողիկոսին: Փիլիպպոս Կաթողիկոս մեղադրելով հանդերձ յիշեալ Եպիսկոպոսը, որ ըսած էր թէ մենք չենք ճանչնար այլ վարդապետ՝ բացի հայ վարդապետներէն, թշնամական կեցուածք մը կ'որդեգրէ Հ. Պիրոմալլիի հանդէպ:

Օգոստոս 30ին (1635) Կաթողիկոսը ու վերոյիշեալ Եպիսկոպոսը կը կանչուին Երեւան, ի դիմաց Սուլթանին: Եպիսկոպոսը հեռացած, աշակերտները դարձեալ կը մօտենան Հ. Պիրոմալլիին, որ կը դրէ թէ անոնցմէ ամէնէն տաղանդաւորն էր Տէր Կիրակոս, որ թէեւ աստիճանէն զուրկ՝ «Վարդապետ» կ'անուանուէր ու կը քարոզէր (f. 79):

Փիլիպպոս Կաթողիկոս երբ կ'իմանայ ասիկա, զինուորներ կը ղրկէ՝ որպէսզի Կիրակոս Վ.ը իրեն բերեն ու Հ. Պիրոմալլիին ալ հեռացնեն: Տէր Կիրակոս կը փախչի, Հ. Պիրոմալլիին կը թաքչի, ուրիշ վանականի մը հետ, վանքին անտառը: «Վերջը իմացայ որ զիս հետապնդողը՝ սպաննելու համար է եղեր: Ազատեցայ վտանգէն, կը դրէ, ապաւինելովս Գառնակեր գիւղը (Villa chiamata Carnagiere)»³⁰:

Յաջորդ օրը Բաքսումա գիւղը իրեն կը միանայ Տէր Կիրակոս Վրդ.ը, զաղտնի ժամադրաւայր մը: Հ. Պիրոմալլի կ'որոշէ այլեւս մեկնիլ. մինչ գիւղի ժողովուրդը կը դիմադրէ եւ կ'ուզէ որ հոն մընայ ու քարոզէ իրենց:

Կը մնան երկուքն ալ: Քրիստոնէական վարդապետութիւն կը սկսին սորվեցնել տեղւոյն մանկութեան, որոնք օրը չորս անգամ կը հաւաքուէին, կը դրէ: Կը ժամերգեն, կը պատարագեն, կը խոստովանեցնեն ու Վարդապետ աղօթքի ջերմեանդութիւնը կը ծանօթացնեն, յետ մատուռ մը սարքելու՝ տան մը մէջ: Մինչեւ իսկ, Կիրակի օրերը, մանուկներու բազմութիւնը հաւաքած, կը համարձակին թուրքերու առջեւ՝ հայ գիւղացիներու թափօր մը կազմել ու վարդապետ ըսել տալ:

Հ. Պիրոմալլի կը հիանայ այդ ժողովուրդին բարի տրամադրութեան վրայ: «Բարոզէն վերջ, կը դրէ, ժողովուրդը քառորդ ժամ կուլար, ինչ որ չէի տեսած քսանամեայ դործունէութեանս ընթացքին»:

Հոս Հ. Պիրոմալլիի աշակերտները կը բազմանան՝ մինչեւ տասն

30. Տեղեկագրի հեղինակին «Villa chiamata Carnagiere» կոչածը՝ Գառնակեր գիւղն է, Գանձակի մէջ: Տե՛ս Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, էջ 85, թ. 165:

եւ հինգ: Ժողովուրդը կ'ապահովէ անոնց ապրուստը: Հ. Պիրոմալլի կը շարունակէ դասաւանդութիւնը. հայերէն ու լատիներէն՝ Քերականութիւն կը յօրինէ (f. 81):

Հանրային այս համակարանքը ժողովուրդին, որուն Հ. Պիրոմալլի կը քարոզէր Գրիգոր Լուսաւորչի անունով, նշուել տալով՝ ինչ որ Ս. Գրիգոր Լուսաւորչի կը նշուէր, կը խոստացնէ Կաթողիկոսին կեցուածքը, որ խիստ նամական կը ղրկէ, զինք որակելով Նեոնի կարապետը, Սաքայէի գերին եւ մոլորեցուցիչ եւ այլն... ու միանգամայն զուլաւանդելով ժողովուրդը փոսկանալէ, ինչ որ եղած էր ժամանակին Ջահուկ: Հոսկ կը հրահանգէ որ յետ վտարելու Հ. Պիրոմալլին, «իւրի խաբուած վանականները շղթայուած իրեն ղրկեն Երեւան: Հակառակ պարագային՝ պատրաստուին 100 թուման վճարել թուրքին»:

Այս հրամանին դործադրութեան համար, տեղւոյն Եպիսկոպոսը երկու երէցներ իւր պատգամաբեր ճամբայ կը հանէ դէպի Բաքսում գիւղը³¹: Ժողովուրդը կը հաղորդէ վերին հրահանգը՝ Հ. Պիրոմալլիին: Սա որոշումը կը յանձնէ ժողովուրդին, ինք իր կողմէ տրամադիր մեկնելու. «Իսկ աշակերտներուս կամքին ես չեմ կրնար հակառակիլ» կ'ըսէ (f. 81v):

Գլխաւորները աշակերտներէն՝ Տէր Կիրակոս եւ Տէր Ոսկան, որ քարտուղար եւս եղած էր Կաթողիկոսին, ժողովուրդը կը համոզեն որ զիրենք հանդիստ թողուն: Ասոր վրայ՝ Բաքսումացիք կը մերժեն անոնց յանձնել Հ. Պիրոմալլին եւ կ'ըսեն. «Իսկ եթէ աշակերտները ուզեն՝ կրնան երթալ. եթէ չեն ուզեր՝ թոյլ պիտի չտանք որ անոնց վրայ բռնութիւն բանեցնէք. լաւ գիտցէք որ մենք Բաքսումացիներ ենք»:

Այս գիւղացիները ահարկու մարդիկ նկատուած էին, կը դրէ Պիրոմալլի:

Պատուիրակները ձեռնունայն կը մեկնին: «Մենք ալ որոշեցինք այլուր մեկնիլ», կը դրէ Հ. Պիրոմալլի:

Այս դէպքերը պատահած են Հոկտեմբերին (1635), մինչ կ'աւարտի սկսուած նորոգութիւնը գիւղի եկեղեցիին:

«Յունուարին (1636), Յայտնութեան տօնէն յետոյ, կը դրէ Պիրոմալլի, ուրիշ տեղ պիտի երթայինք. երբ յանկարծ Եպիսկոպոս մը, քահանայ մը ու տաճիկ զինուոր մը հասան»: Կաթողիկոսը կը

31. Տեղեկագրին Parsumazzie կոչածը՝ Գանձակի Բաքսում գիւղն է, տե՛ս Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, էջ 85: ԱԼԻՇԱՆ, ամդ, թ. 163, կը յիշատակէ Գանձակ նահանգին Այրում գաւառը, հարաւարեւմուտքը նահանգին, զոր ոմանք Հայ-Հոռոմ կը ստուգարանեն, կ'ըսէ: Բաքսում գիւղը սահմանակից է յիշեալ գաւառին:

նդովէր Հ. Պիրոմալին, իր աշակերտներն ու ժողովուրդը. Կեան-
ճեցի իշխանէն ալ շինծու գրութիւն մը կար, որով բոլորը կ'ուզէին
Երեւան տանիլ, բանտարկելու համար:

Հոս մեծահասակ աշակերտները խոյս կու տան. մինչ զինք՝ ա-
շակերտի մը հետ կը շղթայեն:

Մինչ այդ, փախչող աշակերտները, Հ. Պիրոմալին ազատելու
ծրագրով՝ կ'ընդունին անձնատուր ըլլալ, ու Կաթողիկոսին մօտ վե-
րադառնալ: Հ. Պիրոմալիի շղթաները կը քակեն, բայց կ'ուզեն բռնի
տանիլ Կաթողիկոսին: Ան կը դիմադրէ, հաւատալով թուրքի նա-
մակին: Թուրք զինուորը կը ծեծէ Պիրոմալին. միայն աշակերտնե-
րուն կաշառով՝ ծեծը կը դադրի (Ֆ. 83): Եպիսկոպոսը Հ. Պիրոմալ-
իի գլուխէն հայ վեղարը կը վերցնէ: Յաջորդ օր, իտալացի միսիո-
նարը, մի քանի աշակերտներու հետ, Կեանճա կ'երթայ, ճամբան
քարոզելով: Իսկ Տէր Կիրակոս, Տէր Ոսկան եւ ուրիշներ Երեւան ճամ-
բայ կը դուրսն ահաւի մը ընկերակցութեամբ (Ֆ. 84^Վ): Երբ կը մօ-
տենան Ղարամուրատի վանքին, մինչ պահալը կը յառաջէ աւետելու
յաջողութիւնը, աշակերտները առանձին մնացած, մերձաւոր անտա-
ռը կը մտնեն ու կը փախչին՝ լեռ ու ձոր կտրելով նոյն գիշերը ու
յաջորդ երեք օրերը. չորրորդ օրը՝ Կեանճա կը գտնեն իրենց վար-
դապետը «աւելի մեռած քան կենդանի»:

Հ. Պիրոմալի «Հոս ձեռքս հասաւ, կը գրէ, Մոնսիորին նա-
մակը - Տէր Օգոստինոս Արքեպիսկոպոսն է - 1636 Յունուար 10 թը-
ւակիր, ուր ան խորհուրդ կու տար Ապարաններ կամ Կաֆա ապաւինիլ.
որովհետեւ Կաթողիկոսը մտադիր է բանտարկել: Նամակը Ձեր Սըր-
բութեան կը զրկեմ»:

Փախստականները անօդնական՝ կ'որոշեն որ երիցագոյն աշա-
կերտները մնան Կիւլիստանի մէկ աւանը, որ ուրիշ սաներու գիւղն
էր, Կեանճայի լեռան ստորոտը, նախ քան դէպի Պոլիս ուղեւորելը,
ուր ծրագրած էին մեկնիլ³²:

Հ. Պիրոմալի կարուանի մը կ'ընկերանայ դէպի Կարին: Երկու
օր յետոյ, կարաւանապետը, իմացած թէ ան նդովուած է, կը լքէ
զինք: Սա, աշակերտ մը միայն հետը առած, յետ յանձնելու միւս-
ները Տէր Կիրակոսին, դէպի Վրաստան կը շնչի: 1636ի Փետրուարն
է: Նախ Կորի կ'երթայ, որ Կեանճայէն ութը օր հեռու է, հետիոտն
քալելով ճամբուն մեծ մասը:

Քսաներեք օր ետք՝ Տփղիս կը հասնի, ուր կը գտնէ Տէր Ղա-
զարը, չորս ամիս առաջ զրկուած՝ հետապնդելու համար Հ. Պիրո-
մալին, որ կը մերժէ Տէր Ղազարին հրաւերը՝ իր վանքը երթալու:

32. Կիւլիստան աւանը, միշտ Գանձակ նահանգին մէջ, նախնայ Ներսիս Խաչէցի է.
տե՛ս Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, ամդ, թ. 174-176:

ձիով ձրի կը մեկնի ու կ'իջեւանի Կորի, եւ կ'ընդունուի թէադինեան
վանքը՝ Հ. Ճուստոյի կողմէ, որ վեց սկուտ կու տայ իրեն:

Անդամ մը ապահովուած հոն, մարդ կը զրկէ Կիւլիստան՝ ի խըն-
դիր իր գիրքերուն ու նաեւ աշակերտներուն, որոնք սակայն յուսա-
րեկ՝ էջմիածին վերադարձեր էին:

Ճամբու ընթացքին՝ Ղարամուրատի վանահօրմէն լաւ ընդունե-
լութիւն գտած էին - մինչդեռ կանխապէս զննանը նետել հրահան-
գուած է եղեր - ձիւտ այդ օրերուն կը պատահի Եփեսոսի Ս. Ժո-
ղովին տօնը, ու աշակերտները կը մերժեն երգել Դիոսկորոսի գովքը
եւ Ս. Լեւոնի դէմ նդովքը: Անոնք ժամերգութենէն յետոյ, վանա-
կաններուն ներկայութեան, կը հիւսեն Ս. Լեւոնին գովքը: Ու գաղտ-
օրէն կը պատուեն Շարականին այդ էջը եւ կ'այրեն:

Էջմիածին վերադարձող աշակերտները Կաթողիկոսէն լաւ ըն-
դունելութիւն չեն գտներ. իբր նդովեալներ, չ'արտօներ անոնց որ
ըսեն ժամուն աղօթքները: Անոնք կ'ընդվզին ու կը բողոքեն Կաթո-
ղիկոսին, ըսելով «Մենք ուսեալ վարդապետներ կ'ուզենք, որ մեզի
սորվեցնեն. Ձեր վարդապետներէն ոչ մէկը առակ է մեզ զարգացնե-
լու» (Ֆ. 86^Վ):

Կաթողիկոսը աշակերտներէն մէկը կը յղէ Սպահան, վարդապե-
տական աստիճան տալու պատրուակով. բայց ուրիշ գրութեամբ
պատուէր կը զրկէ որ հետը խտուրթեամբ վարուին, որովհետեւ
փռանկ եղած էր: Բարի վանականը, տեղեակ այս բանին, Ոսկանի
Քերակաւութենէն օրինակ մը ձեռքը առած, կը փորձէ համոզել վար-
դապետը, ճանչնալով որ ան ուսման սէր ունի (Ֆ. 87): Կ'ոգեւորուին
ուսումնակիցները: Ու ան կ'ըսէր. «Եթէ Հայերը հետս գէշ վարուե-
լու ըլլան, փռանկներու պիտի դիմեմ, եւ անոնցմէ օգնութիւն զըտ-
նեմ»:

Ուրիշ մը, Մարտիրոս անունով, որ Կաթողիկոսին զրազիրն ալ
եղած էր ու տաղանդաւոր երիտասարդ էր, Ապարանի գիւղին մօտ
զրկուեցաւ, ուրիշ վարդապետի մը քովը, որ փռանկներէն մկրտուած-
ները կրկին կը մկրտէր: Ասիկա յաճախ ծեծած է Մարտիրոսը, այն
չարժառիթով՝ թէ փռանկ է, որ իրենց մօտ հերետիկոսի հաւատար
է: Բարի Մարտիրոսը կը հաւաքէ այդ վարդապետին աշակերտները,
ու Ոսկանի Քերակաւութեան վրայէն դասեր կու տայ, որուն անգէտ
է վարդապետը (Ֆ. 87): «Իսկ Տէր Ոսկան պարտաւորուած է ձեռա-
գիր օրինակելու, ի հաշիւ Կաթողիկոսին, մինչեւ մերձաւոր Զատիկ
(1636ի անշուշտ), փոխարէն ինչ ինչ պարտքերու՝ որոնց պարտա-
ւորուած էր իր վախճանած հայրը եւ Կաթողիկոսը հատուցած էր: Սա
[Ոսկան], բոլորէն աւելի ազատօրէն գէշ կ'արտայայտուի նկատմամբ
հայ վարդապետներուն: Սպահանի իր ազգականներուն զրած է որ

իրենց զաւակները ուսման համար փոանկներուն ղրկեն, վասն զի անոնք են ճշմարիտ կաթողիկէները»:

Ուրիշ երկու աշակերտներ ալ, Տէր Առաքել եւ Տէր Մկրտիչ, որոնք ուրիշ վանք մը ղրկուած էին, կը ծրագրեն ուղի ելլել միանալու համար Հ. Պիրոմալլիին: Միայն զոյգ մը աշակերտներ, խոստանալով հանդերձ չբաժնուիլ խումբէն, Կաթողիկոսին մօտը կը մընան: Իսկ Տէր Կիրակոս հրաժեշտ կ'առնէ Կաթողիկոսէն, պատուէր ստանալով չմիանալու Հ. Պիրոմալլիին (Ֆ. 88): «Տէր Կիրակոս արտօնութիւն առաւ, պատուէրով սակայն իմ մօտ չգալու: Յետ մեկնելուն, Վրաստանի ճամբան բռնեց: Լոռի հասած, ութ օրուան ճանապարհով հեռու Երեւանէն եւ չորս օր՝ Կորիէն, իրեն բարեկամ վարդապետի մը կը հանդիպի, որ զինքը Լոռի իր մօտ կը պահէ, մինչեւ Երեւանէն գալիք լուր մը, միշտ խորհելով Կաթողիկոսէն ընդունիլ իր վարդապետական վկայականը (Patente): Կաթողիկոսէն երկու անգամ հրահանգ կը ստանայ իր մօտ երթալու. Տէր Կիրակոս իր Կարապետ եղբայրը կը ղրկէ իմ մօտ, Կորի, իսկ ինք Երեւան կը վերադառնայ, Սեպտեմբեր ամսոյն ինծի հանդիպելու յոյսով [= անշուշտ 1636ի Սեպտեմբերը]»:

Մայիսին, Ղուկաս Վրդ. Պիրոմալլիի մօտ կու գայ, Քերականութիւն սորվելու եւ Բառարան կ'օրինակէ: Տարիներ առաջ սա, ի զուր խնդրած էր Կաթողիկոսէն որ իր մօտ գայ՝ ուսանելու (Ֆ. 89):

Ղուկաս Վրդ. Պիրոմալլիի կ'իմացնէ որ Կեանճայի Կաթողիկոսը [= Գանճասարի], ժողովուրդի բարի տրամադրութիւններուն վերայ, կ'ուզէ հրաւիրել զինք՝ որպէսզի իր կրօնաւորներուն կրթութիւնը իրեն յանձնէ: Եթէ էջմիածին չ'ուզեր, ըսած է, ես կ'ուզեմ: «Իժուարին հարց ինծի համար», կը գրէ Պիրոմալլի, որովհետեւ այս Կաթողիկոսին ժողովուրդն ալ, նախկին բարբառնին կորսնցուցած ըլլալով, հայախօս էին:

Այս Ղուկաս Վրդ.ը յաճախ կը մեղմացնէ Կաթողիկոսին ցասումը: Բայց ահա Կորիի ժողովուրդին մէջ ձայն կը տարածուի՝ թէ անիկա Պիրոմալլիին եկած է, փոանկ վարդապետի մը, ուսանելու համար: Կորիի եպիսկոպոսն ալ, որ ինքզինքը բարեկամ կը կեղծէր, այնքան ազդեց Ղուկաս Վրդ.ին վրայ, որ սա օր մը իր քահանաներէն մէկը կը ղրկէ Պիրոմալլիի՝ թէ ա'լ ուսման համար պիտի չգայ (Ֆ. 90): Թէեւ Պիրոմալլիի հանդէպ իր համակրանքը փոփոխութիւն չի կրեր: «Ուստիք կը ղրկէր ինծի, եւ որքան կրնար, կը գրէ Պիրոմալլի, երբ կը քարոզէր, իմ գովեստս կը հիւսէր: Իր աշակերտներէն մէկն ալ ինծի յանձնեց, անոր կերակուրն ալ հոգալով. ու Զաքարիային հետ ինքն ալ, ասիկա ալ երկու շաբաթ հետեւեցան իմ դասերուն: Բայց հակառակորդս՝ Տէր Ղազար, երբ Կաթողիկոսին

մօտ վերադարձաւ, շեղեցուց զինքն ալ ինծմէ, որ դժկամակ մեկնեցաւ, յետ չորս Սկուտ տալու ինծի:

«Մայիսին (1636) հասաւ նաեւ վերոյիշեալ Կարապետը, եղբայրը Տէր Կիրակոսին, շարունակելու համար իր ուսումը՝ միանգամայն բերելով ինծի լուրեր աշակերտներէս, որոնք բազմացած էին, նաեւ հալածանքի ենթակայ (Ֆ. 90)»: Բայց Հ. Ճուստոյ վանք չընդունեցաւ զանոնք, տալիք կերակուր չունիմ՝ ըսելով: Ապարաներցի Եղբայր Դոմենիկոսին հետ, հաց հայթայթելով միայն, ես ալ սեղանակից իրենց, անցուցինք, Ղուկաս Վրդ.ին չորս Սկուտի ողորմութեամբ:

«Սկիզբը՝ տեղացիները ընդդիմութիւն ցոյց տուին. բայց երբ իմացան թէ ինչ էին սորվեցուցած նիւթերս, հանդարտեցան: Ծառաթ մըն ալ քարոզեցի, աւելի քան 600 զինուորներու, որոնք իշխանին հրամանով եկած էին (Ֆ. 91): Հ. Ամբրոսիոս, Թէադօնեան վանահայրը, Սեպտեմբեր ամսոյն (1636) սկիզբը վերադարձաւ: Դժգոհ էր տեսնելով զիս դեռ հոն՝ իմ երեք սաներովս»:

Այնուհետեւ, Հ. Պիրոմալլի, կը վճռէ մեկնիլ դէպի Պարսկաստան, Ծահէն արտօնութիւն ստանալ՝ Դարէթ հաստատութիւն համար: Մեկնումին առթիւ, վերոյիշեալ վանահայրը զինք յետին չքաւորութեան մէջ տեսնելով, տասնեւհինգ Սկուտ ողորմութիւն կու տայ, եւ Հ. Պիրոմալլի ձի մը կը դռնէ՝ իր ճամբուն համար (Ֆ. 91). ճանապարհին, Տէր Կիրակոսին կը պատահի, որ զինքը կը տարհամոզէ Պարսկաստանի իր ծրագրէն, Կաթողիկոսին սպառնալիքը առջեւը դնելով, որ կրնայ Ծահին մօտ խափանել իր ծրագիրը, ըսելով նաեւ՝ թէ իր աշակերտներն ալ կը սպասեն, պատրաստ՝ իրեն հետեւելու: Ուստի, իրեն խորհուրդ կու տայ ուղղուիլ դէպի Լեհաստան, «բան մը՝ որուն դէմ էի, կը գրէ Հ. Պիրոմալլի, սկիզբները»³³: Եւ կը մեկնի դէպի Կարին:

Տէր Կիրակոս կը մնայ միւս աշակերտներուն հետ, յաջորդ կարաւանով հետեւելու համար իրեն (Ֆ. 92): Հ. Պիրոմալլի իր հետը աշակերտ մը միայն առած է³⁴:

Երկրորդ օրը, կարաւանի ուղեկիցները, բացի վաճառականէ մը, Հ. Պիրոմալլիի դէմ կ'ելլեն: Կը նեղեն թէ՛ զինքը եւ թէ՛ իր հետը եղող աշակերտը. որովհետեւ «գիտէին, կը գրէ, թէ Կաթողիկոսի երեսնէն խոյս կու տայի»:

33. Տէր Կիրակոսին խօսքը՝ թէ Կաթողիկոսը կրնայ Պիրոմալլիին մատնել Ծահին, եթէ Դարէթ երթալու ըլլայ, գուցէ չափազանցութիւն մըն է: Ատիկա ըսած է անշուշտ, Հ. Պիրոմալլի իր տեսակէտին շահելու համար:

34. Այս աշակերտին անունը Զաքարիա է, ինչպէս որ Տեղեկագրին վերջաւորութեան, Կ. Պոլիս մտնելու պարագային, յիշատակուած է:

Կարին հասնելուն, անոնք կ'որոշեն ա'լ չընդունիլ օտար Մխիթնաբը՝ իրենց խոմբին մէջ: Այնուհանդերձ, Հ. Պիրոմալլի մինչեւ Թոգադ (Եւդոկիա) կը հասնի, ուր սիրով կ'ընդունուի. երկու շաբաթ կը քարոզէ Հայոց եկեղեցին, եւ ողորմութիւն կը ստանայ իր ուղեծախսին համար:

Ճամբան, դէպի Պոլիս, «քիչ մնաց որ թուրքէ մը, որ զիս չէր ճանչնար, կ'ըսէ Պիրոմալլի, քարկոծուած, մեռնէի (f. 92v). բայց Աստուած փրկեց զիս, ու տուաւ ուտելիք՝ ո'չ միայն ինծի ու ընկերոջս, այլ նաեւ միջոց՝ որ կարենայի ձիովս հասնիլ Կ. Պոլիս, ողջ առողջ, ճիշտ Ս. Պողոս առաքեալի դարձին օրը, իմ Զաքարիա աշակերտիս հետ միասին» (= Այդ տօնը, Լատինաց յատուկ, կ'իյնայ 25 Յունուարին): Ուրեմն, Պոլիս մտած են 1637 թուականի Յունուար 25ին:

Հ. Պիրոմալլի փառք կու տայ Աստուծոյ, «Գովեալ եղիցի Տէրը» գոչելով, որ ցուրտէն, բուքէն, քաղցէն եւ ուղիի նեղութիւններէն զերծ անցուց զինքը: Ու այսպէս կը փակէ իր այս Տեղեկագիրը:

* * *

Այս վաւերաթուղթին համաձայն, Հ. Պիրոմալլի ընդգրկմադեր վարդապետները, իրմէ իսկ յականէ յանուանէ յիշատակուած, եղած են Ղազար եւ Ներսէս՝ Փոքր Հայքէն: Ղազար Վրդ. որակուած հոն իբր մատակարար էջմիածնի, զուցէ լուսարարապետն էր. իսկ Ներսէս Վրդ.ը ո'վ կրնայ ըլլալ:

Մեզի ծանօթ ժամանակակիցներէն կայ Ներսէս Վրդ. Մոկացի մը, վանականութեան բարեկարգիչ, որ, սակայն, արդէն 1627ին վախճանած էր³⁵: Կայ Ներսէս Վրդ. Անարծաթ մը, 1686ի ատենները, որ կը ներկայանայ իբր «այր հրաշագործ եւ յոյժ սքանչելի», վախճանած Սալմաստ³⁶: Նոյնպէս ուրիշ Ներսէս Վրդ. մը, առաջնորդ Տաթևի, որ ղեկավար սպաննուած է 1655ի Ապրիլ 29ին³⁷: Ասոնցմէ ոչ մէկը կրնայ Փոքր Հայքէն ըսուիլ:

Կայ հուսկ՝ Ներսէս Վրդ. Սերաստացի մը, որ 1637ին Սերաստիոյ Առաջնորդական Աթոռը նստաւ, ուր շուրջ տասնմէկ տարի շինարար գործունէութիւն մը ունեցաւ. եւ որ 1642ին յաջորդեց Սոոյ Աթոռին վրայ՝ Սիմէոն Կաթողիկոսին³⁸: Ասիկա Փոքր Հայքէն է, եւ շատ հաւանօրէն ինքն է վերոգրեալ վաւերաթուղթին մէջ յիշա-

35. ԱՌԱՔ. ԴԱԻՐԻԺԵՑԻ, Պատմութիւն, տպ. Ամսդերտամ, 1669, էջ 192-198:

36. ԳԻԻՏ ԱՂԱՆԵԱՆՅ Ա. ՔԷՆՅ., Դիւան Հայոց Պատմութեան, Գիրք Ժ. տպ. Թիֆլիս, 1912, սիւնակ 111:

37. ԵՐԵՄԻԱ ՉԷԼԵՊԻ ՔԷՕՄԻԻՐՃԵԱՆ, Օրագրութիւն (Հրտ. Մեարոյ Արքայ. Նշաններ), Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1939, էջ 69:

38. ԳԻԻՏ ԱՂԱՆԵԱՆՅ, անդ, սիւնակ 402:

տակուած Ներսէս Վրդ.ը: Անշուշտ յետ իր ընտրութեան՝ էջմիածին դնաց, որպէսզի Եպիսկոպոս ձեռնադրուի, եւ այդ շրջանին հանդիպեցաւ Պիրոմալլի:

Իսկ Հ. Պիրոմալլի համամիտ ու հետեւող եղած են Արիստակէս, Գրիգոր, Պողոս Կ. Պոլսեցի, Եսայի ու Վարդան վարդապետները: Աշակերտներէն, յականէ յանուանէ յիշուածներն են՝ Տէր Կիրակոս, Ոսկան, Զաքարիա, Տէր Առաքել, Տէր Մկրտիչ, Մարտիրոս ու Կարապետ՝ եղբայրը Տէր Կիրակոսին:

Այս վերջիններուն մասին դեռ կ'անդրադառնանք այս ուսումնասիրութեան ընթացքին:

ՀԱՅ ԴՊՐՈՑԻ ՈՒ Հ. ՊԻՐՈՄԱԼԼԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ ՏԵՂԱԽՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Նախընթաց բաժնին մէջ ըսուածներէն յայտնի է թէ Հ. Պիրոմալլի հիմնական մտահոգութիւնը՝ արեւմտեան ըմբռնումով Հայ Դպրոցի մը կամ Ժառանգաւորացի մը հիմնարկութեան հարցն է. որուն համար ալ արդէն ինք առաքուած էր: Տարուան մը բնակութեանը, ուսուցիչի դերով՝ Ս. էջմիածնի մէջ, ու յարաբերութիւնները՝ զոր մշակեց, Փիլիպպոս Կաթողիկոսի օրով, դեռ աւելի շեշտեցին իր մէջ այս սահանջին ստիպողական հանգամանքը:

Բայց այդ սահանջին գիտակցութիւնը իրմով չէ որ սկսած է, ո'չ Հռոմի, ո'չ ալ Հայաստանեայց Եկեղեցւոյ լաւատեղեակ շրջանակներուն մէջ: Բաւ է խուսափուել ակնարկ մը ձգել նոյն դարուն Հայ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած խմորումներուն վրայ, զգալու համար թէ իրմէն առաջ արդէն ծայր տուած էր այդ շարժումը:

«Ecclesia Romana» կոնգալով, 1584ի Հոկտեմբեր 13ին հրատարակուած, Գրիգոր ԺԳ. Պապը, յետ դրուատելու հայ Ժողովուրտարակուած, Գրիգոր ԺԳ. Պապը, յետ աւագ դերը՝ Միջին Արեւելքի բարեմասնութիւնները, եւ անոր աւագ դերը՝ Միջին Արեւելքի քրիստոնէութեան մէջ, կը վճռէր հիմնել Հռոմի մէջ՝ Հայ Գովթ. Դպրանոց մը, որպէսզի հոն կազմուէին զարգացած ու գիտակից հայ եկեղեցականներ: Առ այս՝ կարեւոր դումար ալ մէկդի դնել տուաւ: Տեսանք թէ ինչպէս Սոոյ Կաթողիկոսը՝ Ազարիա Ա. կը շնորհաւորէր Գրիգոր ԺԳ. Պապը՝ այդպիսի ձեռնարկութեան համար: Բայց Պապը իր ծրագիրը ինք չկրցաւ իրագործել, վասնզի յաջորդ տարին կը վախճանէր (1585):

Յաջորդող Պապերուն դահակալութիւնները սակաւատեւ եղան, մինչեւ Ուրբանոս Ը. (1623-1644): Անոնք ժամանակ իսկ չունեցան խորհելու այդ մասին: Ուրբանոս Ը. ձուլեց Հայ Գովթի ծրագիրը՝ աւելի ընդարձակ ու միջ-եկեղեցական առաքելական Վարժարանի

Այս բոլորը ցոյց կու տան թէ, Մովսէս Գ. Տաթևացի Կաթողիկոսով ծայր տուող վերածնունդի մեծ ձեռնարկը ինչպիսի ճիւղաւորումներ ունէր: Ուստի, նաեւ հեռաւոր Հայաստանէն մինչեւ Օսմանեան մայրաքաղաքը, իտալացի միսիոնարի մը հետքերուն վրայէն հետեւող ուսումնաստենչ քանի մը հայ արեղաներուն արարքը ոչինչ տարօրինակ ունէր ինքնիր մէջ:

Այսո՞ւ որ Մովսէսի Կաթողիկոսութիւնը շատ կարճատեւ եղաւ. ընդամէնը չորս տարի: Լվովի Նիկոլեան դէպքերուն տխուր ընթացքը մթնոլորտը աւելի պղտորելու ծառայեց՝ քան թէ երկու Եկեղեցիներու միջեւ միաբանական ճանապարհը հարթելու: Երկուստեք թափուած ջանքերը չյաջողեցան տալ անոր հաշտարար ուղեգիծ մը, ու փարատել թիւրիմացութեան ու անյստահութեան մշուշը, որուն հոսանքը վաղեմի դարերէն կու գար: Այսպիսի առողջ տրամադրութիւններով ու լուսամիտ ոգիով տողորուած, Մովսէսի աշակերտն ու արժանաւոր յաջորդը՝ Փիլիպպոս Կաթողիկոս, թէեւ կը դահակալէր այդ մշուշապատ մթնոլորտին մէջ, բայց երբեք չտատամսեցաւ ընդունելու լատին միսիոնարը Ս. Էջմիածին ու անոր յանձնելու իր ժառանգաւորաց վարժարանին դասաբեմը, որուն շարքերուն մէջ մտան նաեւ մեծահասակ ուսումնաստենչ արեղաներ. ասոնց կարգին՝ քսանամեայ Ոսկան:

Անդին, Հռոմի կողմէն, Հայ Ժառանգաւորացի հարցը, բացառապէս հայ աշակերտութեան համար սահմանուած, ուրիշ առիթներով ալ քննութեան կ'առնուի ժէ. դարուն մէջ:

Յիշենք ՀՍ.ի մէկ նամակը, 1637 Յուլիս 25 թուակիր, ի պատասխան Կիրակոս Վրդ. Երեւանցիին, որ կը յայտարարէ թէ Ն. Ս. Ուրբանոս Ը. Պապը եւ ՀՍ.ի Ս. Ժողովը պիտի չթերանան գլուխ հանելու Հայոց համար վարժարանի մը հիմնարկութիւնը, կա՞մ Հռոմի մէջ, կա՞մ ալ Լեհաստան:

ՀՍ.ի Ժողովին 1642ի Նոյեմբեր 24ի նիստին մէջ, կը ղեկուցուի Թէադին Հ. Կղեմէս Կալանոսի ու Յովհաննէս Արքեպս. Տիգրանաւերտցիի առաջարկը: Կուղեն որ այդպիսի հիմնարկութիւն մը Կ. Պոլիս հաստատուի, քաղաքին ամէնէն աւելի հայաշատ՝ Բերայի թամասին մէջ⁴³:

Յաջորդ տարին, 1643ի Նոյեմբեր 6ին, բացառիկ Ժողովի մը մէջ, կարգինալները կը դբադին այդ հարցով:

1648ի Օգոստոս 3ի նիստին մէջ, կը ղեկուցուի՝ թէ Սպանիոյ Առաքելական Նուիրակը Հռոմ դրկած է 5·514 դուկատ ոսկի, ի պէտս վերոյիշեալ վարժարանին:

1651ի Յուլիս 20ի բացառիկ դումարումին մէջ, կը վճռուի բանալ վարժարանը. դորժադրութիւնը, սակայն, կը բախի ուրիշ դրժումարութիւններու⁴⁴:

1660 թուականի Օգոստոս 27ի նամակով մը, Հ. Կղեմէս Կալանոս, Ս. Ժողովի Քարտուղարին կը գրէ, Առաքել անունով հայ արքեպս.ի մը թելադրութեամբ, թէ անհրաժեշտ կը դատէ հայ Դպրոցի մը հիմնումը Հռոմ, դոհացում տալու համար այն հայադղի եկեղեցականներուն, որոնք այդպիսի ծրագրով Հռոմ կու գան: Ծրագիրով մը՝ որ ամբողջական ըլլայ. հայերէն՝ գրական լեզու, լատիներէն՝ փիլիսոփայութիւն, եկեղեցական դիտութիւններ, աստուածաբանութիւն, տեսական ու բարոյական: Բոլորովին հայ մթնոլորտի մը մէջ դաստիարակել աշակերտութիւնը, հայածէս պաշտամունքով ու հայերէնով կատարուած դասախօսութիւններով: Նման ձեռնարկ մը, արդէն սկսուած Թէադինեան Միաբանութեան մայր վանքին մէջ, Հռոմ, Ս. Անդէաս տէլլա Վալլէ եկեղեցիին յարակից, կ'ուզուի այժմ փոխադրել նոր շէնքի մը մէջ, Հ. Կալանոսին տալով օգնական Հայր մըն ալ, միեւնոյն Միաբանութենէն. եւ կ'որոշուի Հ. Քարաչէիով՝ որ հայերէն լեզուի ալ տեղեակ է⁴⁵:

Այսպէս, աշակերտները կը տեղաւորուին Ս. Սեդրեստրոս եկեղեցիին կից շէնքի մը մէջ, երկու վերոյիշեալ կրօնաւորներուն խնամքին տակ, երկուքն ալ հայախօս: Ամէն ինչ ՀՍ.ի Ժողովին ծախքով:

Հ. Կալանոս, իր դրութիւններով յաջորդաբար տեղեակ կը պահէ Ս. Ժողովը, աշակերտութեան հոգեւոր դաստիարակութեան, ուսումնական ընթացքին եւ ծիսական պաշտամունքին մասին: Աշակերտներէն մէկը կը պատարագէ, միւսներուն մասնակցութեամբ: Ամէն կիրակի հոգեւոր հրահանգներ ունին⁴⁶:

Հուսկ, 1665ի Փետր. 24ին, Լվովի թեմին մէջ հիմնուեցաւ ուրիշ հայ Դպրանոց մը, սահմանափակ ծրագրով, եկեղեցական ասպարէզի նուիրուած տաճներու աշակերտի համար: Ասոր հիմնադիրն ալ Հ. Կղեմէս Կալանոսն է. վարժարանը Թէադինեան կրօնաւորներուն խնամքին յանձնուած է: ՀՍ.ի Ժողովը 400 սկուտ տարեկան թոշակով ստանձնած է անոր տնտեսական հոգը:

Այս ձեռնարկները ապացոյցներ են՝ թէ ժէ. դարու առաջին կէսին, վերոյիշեալ պահանջը զգացուած էր առ հասարակ Հայ նուիրապետութեան բարձր շրջանակներուն մէջ, որուն ընդառաջելու ջանքեր չխնայեց Հռոմը: Հ. Պիրոմալլին ալ, եթէ այդ հարցը կը յու-

44. AP, Acta, v. 15, f. 465, n. 21. - v. 18, f. 140, n. 17. - v. 20, f. 63, n. 1.

45. AP, SOCG, v. 223, f. 58-61. - Acta, v. 29, f. 211, n. 1.

46. AP, SOCG, v. 223, f. 76.

զէր, պարզապէս ձայնակից կ'ըլլար համերգին, իր անձնական փորձառութեան շնորհիւ ալ ղուգելով անոր: Մանաւանդ թէ՛ իր նժդեհ ղեկերումներուն հետեւող խումբ մը աշակերտութեան խնդրանքը ստիպողական հանգամանք կու տար ձեռնարկին:

Հ. Պիրոմալլիի 1637 Փետրուար 12 թուակիր նամակը, ուղղուած Ուրբանոս Ը. Պապին, առաջնորդող դիր մըն է, ուր անմիջական որոշուելիք հարցեր կը դնէր նամակագիրը. վերեւ մեր արտադրած երկարաշունչ տեղեկագիրը ընկերացած պէտք է ըլլայ կա'մ ասոր, իբր ներփակ ղեկուցագիր բոլոր դէպքերուն, եւ կամ, աւելի հաւանօրէն, նոյն տարուան Մարտ 4 թուակիր նամակին, որ նոյնպէս Ուրբանոս Պապին ուղղուած է:

1637ի Փետրուար 12ի նամակին մէջ, Հ. Պիրոմալլի նախ կ'անդրադառնայ իրեն հետեւող աշակերտներու խնդրին, որոնք իրենց ուսումնատենչ խանդավառութեամբ, նոյնիսկ իրենց հայրենի շրջանակէն հեռացան, ի սէր ուսման: Միսիոնարը, հիացումով կը դրէ անոնց մասին. «Աստուած ասոնց մէջ սերմանած է իմաստութեան եռանդը ու բաղձանքը. վերահասու դառնալով թէ ինչ որ անոնք կը տեսնէին՝ սխալ էր ու հերետիկոսական: Այս որոշման յանդեցայ (այսինքն՝ Հայաստանը թողած՝ Պոլիս գալով) աշակերտներու խնդրանքին վրայ, խորհելով թէ Լեհաստան կրնային դիւրութիւն ունենալ, առանց հալածանքի (ուսման հետեւելու): Անձամբ պիտի չուզէի շինել ուրիշներէ դրուած հիմերու վրայ: Ասկէ դատ, տեղն ալ շատ հեռու է ու դժուարամատոյց (կ'անկարկէ Նախիջևանի թեմին՝ ուր ինք յատկապէս ղրկուած էր իբր տնօրէն դպրոցին): Եթէ ուղենք պահանջը նկատել, հարկ էր վարժարանը հիմնել Հայաստանի մէջ: Բայց Կաթողիկոսը քանդել կու տայ՝ թաղաւորին բռնութեամբ (այսինքն՝ Շահին), թելադրելով անոր թէ Հայաստանը կ'ուղենք փռանկին յանձնել: Շուարած եմ. որոշեցի հոս Կ. Պոլիս՝ վերին հրամանին սպասել: Մանաւանդ որ կը յուսամ թէ տարեց աշակերտները հետզհետէ պիտի ժամանեն»: Անոնց կարգին կար նաեւ Ոսկան, որ դեռ Պոլիս հասած չէր, 1637ի Փետրուարին⁴⁷:

Հ. Պիրոմալլիի այս տողերուն մէջ կը նշմարուի.

ա.— Ակներեւ ջանք մը՝ ինքզինքն արդարացնելու Պապին առջեւ, թէ ինչ պատճառներէ մղուած՝ իր առաքելավայրէն հեռացած է ու Պոլիս եկած. արդարեւ, իբր հալածական կը շրջէր, չդիտնալով ո'ւր ապահովութիւն գտնել: Ծրագրած էր ուղղուիլ Սպահան, բայց Կիրակոս Վ. զինք ետ կեցուց եւ դէպի Պոլիս ուղղեց անոր քայլերը, որպէսզի ընկերներով կարենար Հռոմ անցնիլ՝ ուսման համար:

բ.— Իրական առեղծուածը, մանաւանդ՝ թնճուկը. ուղել ձեռք երկարել Եկեղեցիի մը եւ ժողովուրդի մը կրթական ու հոգեւոր կարողութիւններուն, առանց կանխապէս գետինը հարթած ըլլալու, յատկապէս վերին խաւերու մէջ՝ դադար, եկեղեցական հաղորդակցութեան վերահաստատումով:

գ.— Միսիոնարին ստիպողաբար՝ բաւականացումը՝ քանի մը խանդավառ աշակերտներ տեղաւորելով վարժարանի մը մէջ, գոհացում տալու համար անոնց ուսման պապակին:

դ.— Միսիոնարին համոզումը՝ թէ Նախիջևանի լատինահայ Զահեկեցիներու թեմին դպրանոցը վերականգնելու ծրագրին համակրած չէր, յետ դառն փորձառութեան՝ որ կրած էր անկէ: «Անձամբ պիտի չուզէի շինել ուրիշներէ դրուած հիմերու վրայ» կը դրէ Պիրոմալլի: Այդ հիմերուն վրայ մնայուն չէնք չէր կրնար բարձրանալ. ճիգերու ամուլ կորուստ մըն էր: Ինք թէեւ լատին միսիոնար էր, ու Դոմինիկեան Ուխտէն, բայց ո'չ Զահեկեցի: Մշակուած միտք, զգացեր էր, անշուշտ, սակաւ տարիներու իր փորձառութենէն, թէ Յովհաննէս Քոնեցիի միաբանական ձեռնարկութիւնը սնանկութեան դատապարտուած էր այլեւս: Պիրոմալլի կը զգար՝ թէ կարելի էր Հայոց Եկեղեցիին եւ հայ հաւատացեալ ժողովուրդին օգտակար ըլլալ, միմիայն զարգացած հոգեւոր մշակներ պատրաստելով, ինչ որ Մովսէս Տաթեւացի Կաթողիկոս սկսած էր արդէն՝ Անապատներու եւ Վանականութեան հանգած վառարանները արծարծելով: Ուստի, Հ. Պիրոմալլի սապէս կը պատճառաբանէր. «Եթէ ուղենք պահանջը նկատել, հարկ էր Վարժարանը հիմնել Հայաստանի մէջ». ա'յն Վարժարանը՝ զոր Գրիգոր ԺԳ. ծրագրած էր Հայ Եկեղեցւոյ ու Քրիստոնէութեան ի սպաս, եւ զոր Նոր Զուղայի հայ վաճառականներն ու Մովսէս Կաթողիկոս առաջարկած էին հիմնել Հռոմ, ԺԷ. դարու առաջին քառորդին:

Անշուշտ, Հ. Պիրոմալլիի հիմնական դիտումներուն գլխաւոր առանցքը կը կազմէր ի գլուխ հանել Հայոց Եկեղեցւոյ հաղորդակցութիւնը Հռոմի Եկեղեցիին հետ: Բայց ոչ մէկ ապացոյց ունինք ենթադրելու՝ թէ ատիկա ուղած ըլլայ իրագործել Զահեկեցիներու «Ֆրանկներու» (ինչպէս սովոր էին որակել այդ դարուն) ուղիով: Ընդհակառակն, անձամբ ջօշափած ըլլալով այդ ձեւին սնանկութիւնը, կը յայտնէ իր միտքը՝ թէ ուրիշներու դրած հիմերուն վրայ չի զգար վաստակիլ: Եւ իրօք, յաջորդ տարիներուն, նա զգալ կու տայ մեզի թէ իւրացուցած չէ երբեք Զահեկեցիներու ոճը, պնդելով հանդերձ հարկը՝ Եկեղեցական հաղորդակցութիւնը վերահաստատելու Հայոց ու Հռոմի Եկեղեցիներուն միջեւ: Եթէ հոս հոն կան, իր գրչին տակ, հաստատումներ՝ սրբագրելու ինչ որ սխալ է, ատիկա կը վե-

րաբերի առաւելապէս հայ եկեղեցական հեղինակներէն ոմանց դիրքերուն մէջ բովանդակուած ինչ ինչ թերի բացատրութիւններուն, եւ ո՛չ թէ պաշտօնական Հայ Եկեղեցւոյ դաւանանքին:

Բայց այս խնդրին վրայ աւելի չենք ուղեր երկարել, չխղելու համար դէպքերուն շղթայումը:

Միեւնոյն 12 փետրուարի իր նամակին մէջ, Հ. Պիրոմալլի իր Պոլսոյ առօրեայ կեանքին մասին կու տայ հետեւեալ տեղեկութիւնը. Աղքատօրէն կ'ապրի, հաց ու ջուրով, իրեն ընկերացող աշակերտին հետ, որ այլուստ ծանօթ Զաքարիա աշակերտն է: Կ. Պոլսոյ Դոմինիկեան Հայրերու վանքը, կը դրէ, աղքատ ըլլալով՝ ի վիճակի չէր իրեն օգնելու: Ինչ որ, սակայն, իրեն վիշտ կը պատճառէ, այն է որ իր իսկ կարգակից Դոմինիկեան Հայրերը ձայն կը շրջեցնեն՝ իբր թէ ինք կը շրջի առանց Միսիոնարի պաշտօնական հաստատագրի, որ իր երթի ընթացքին դէպի Նախիջեւան, Հալէպի մէջ գողցուած էր:

Վերոյիշեալ նամակին վրայ երեք շաբաթ անց, Մարտ 4ին, դարձեալ Պոլսէն կը գրէ Ս. Պապին՝ թէ կը սպասէ իր մասին գալիք հրահանգներուն. «Պատրաստ եմ արիւնս ալ հեղլու՝ որքան անգամ հարկ ըլլայ: Այսպիսի տրամադրութեամբ տողորուած եմ, այնքան աւելի՝ որքան ձեռքովս շօշափեցի այս դժբախտ Եկեղեցւոյն (Հայաստանեայց՝ ըսել կ'ուզէ) առաւելագոյն կարիքները: Ամբողջ երկրասարդութեան սրտերը գերազանցօրէն լաւ տրամադրուած են: Եւ ինչ որ կ'արդիւնէ ինծի որեւիցէ դադափար նահանջի, այն յայտնի շնորհներն են՝ որ կ'ընդունիմ անընդհատ Յիսուս Քրիստոսէն»:

Շարունակելով իր նկատողութիւնները՝ «Ինչ որ ստիպողական է այս Եկեղեցւոյն համար, վերահաստատումն է եկեղեցական հաղորդակցութեան՝ Կաթողիկէ Եկեղեցիին հետ, ու հիմնարկութիւնը նոյն ինքն Հայաստանի մէջ՝ Վարժարանի մը»: Ինք կը հասկնայ Ժառանգաւորաց մը: «Տիրող կարծիքը այն է՝ որ մինչեւ 400 եւ աւելի աշակերտ ալ կարելի է ունենալ»: Բայց, կը յաւելու, խոչընդոտներ կան. ա) «Ներկայ Կաթողիկոսին չկամութիւնը. բ) անհաւատներէն վախը, որոնք պիտի կարծեն՝ թէ կը միաբանինք, իրենց դէմ ապստամբեցնելու համար» Հայ Ժողովուրդը:

Այդ առաջին խոչընդոտը կը յուսայ կարենալ հարթել: Որովհետեւ ատիկա առաջ կու գայ առաւելապէս Կաթողիկոսին դահնկէց ըլլալու վտանգէն «մէկ քանի երիցագոյն (Վարդապետներու) եւ յամառագոյններուն» կողմէ: Իսկ երկրորդ խոչընդոտը՝ կրնայ վերացուիլ նուէրներու ուժով, իշխողներուն բաժնուած: Հուսկ՝ նամակագիրը կը փակէ իր գրուածքը այսպէս. «Մեծ դուռ բացուած է ինծի Կ. Պոլիս: Հայերը զիս իրենց Եկեղեցին կը հրաւիրեն, ուր զիս ալ կը յիշատակեն իրենց Պատրիարքին հետ: Իսկ իրենց վարդապետներէն մէկը իմ մօտ կու գայ՝ լատիններէն լեզուն սորվելու»:

Ապա կը խնդրէ իր Առաքելութեան հաստատագրին նորոգութիւնը, աւելի ընդարձակ իրաւասութեամբ՝ քան նախորդը, որ միայն Մեծ Հայքի վրայ կը տարածուէր⁴⁸:

ՀՍ.ի Ժողովը, իր 1637ի Սեպտ. 22ի նիստով՝ կը վճռէ զայն տարածել ամէնուրեք՝ ուր Հայերը կը բնակին [= «ad omnia loca Armenorum»]⁴⁹:

Հ. Պիրոմալլի կը թուի ըլլալ մէկը ԺԵ. եւ ԺԸ. դարուն այն յըստակատես Միսիոնարներէն՝ որոնք նշմարած են առաջնակարգ խափանարար դերը Իսլամ իշխողներու քաղաքականութեան՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ միաբանական շարժումը կասեցնող: Իրմէ յետոյ, ԺԸ. դարուն սկիզբները, նման ախտաճանաչում պիտի ընէ՝ հայագէտ ու հայասէր Փրանսացի Հ. Վիլոտ, յետ մօտէն ճանչնալու, գնահատելու եւ սիրելու թէ՛ Հայաստանեայց Եկեղեցին եւ թէ՛ Հայ ազգը:

Վերեւ արտագրուած Տեղեկագրին մէջ տեսանք արդէն՝ թէ երկտասարդ Ոսկան Երեւանցին ալ իտալացի միսիոնարին աշակերտներէն է: Մանաւանդ թէ Կիրակոս Երեւանցիին հետ, Ուսուցիչին մասնաւոր գնահատութեան առարկայ է, իր ուսումնատենչ եռանդին համար: Բայց մինչ իր ուսուցիչ Պիրոմալլիի ու նաեւ երիցագոյն ընկերոջ ողիսականը կը վերջանար, 1637ի սկիզբները, Օսմանեան մայրաքաղաքը վերադառնալով, ո՛ւր կը գտնուէր արդեօք Ոսկան:

Վաւերաթուղթ մը, գրուած նոյն ինքն Ոսկանէն, 1637 Մարտ 27 թուակիր, կը յայտնէ մեզի՝ թէ այդ տարին, ան էրդրում կը գտնուէր «մոլորական ճանապարհաւ»: Նամակը ուղղուած է ուսուցիչին, Հ. Պիրոմալլիին եւ Կիրակոս Վրդ.ին: Այս է յիշեալ նամակին սկզբնաւորութիւնը. «Գերագոյն Տեառնդ իմոյ պատուական նազելոյդ՝ Պօքսս վրդ. Պիրոմալլիի եւ Տէր Կիրակոսիդ, նուստ եւ տառապեալ յանձնէ հասցէ ողջոյն բազմատենչ սիրով, եւ համբոյր երկնադնաց դարչապարաց ձերոց, արտասուած թոր աջօք ըստ կնոջն պոռնրկի եւն...»: Յետ այս ներածականին, կը հարցնէ անոնց որպիսութիւնը, ու կը շարունակէ. «Կեամ ըստ արժանեաց իմոց, ձերական սուրբ աղօթիք եւ շնորհօք Տեառն, եւ զապագայն Տեառն եմ ապաստան»: Կը զեկուցանէ թէ էրդրում հասած է «ընդ տղայոցդ, փախըստական, մոլորական ճանապարհաւ եւ բազում չարչարանօք», ըլլա՛յ ուղեծախսի դժուարութիւններուն, ըլլա՛յ նաեւ Թրքաթան խառնալիքին համար: Հուսկ կը թախանձէ տեղեակ պահել զինք՝ իրենց որպիսութեան մասին, եւ այնպէս ընել որ «եւ ես դայցեմ վաղվաղակի (ի Կ. Պոլիս), քանզի սիրտ իմ տոչորի եւ աղիք իմ դալարի յորժամ ի միտս իմ գայք»: Իր մեծագոյն բաղձանքն այն է՝ որ կարենայ,

48. AP, SOCG, v. 293, ff. 20-23v.

սպասելին իրենց մասին Հռոմէն դալիք կարգադրութեան: Կը տենչան Հռոմի մէջ ուսանիլ «գիմաստութիւն (այսինքն՝ իմաստասիրութիւն) եւ զԱստուածաբանութիւն, զի թերեւս կատարելապէս կարասցուք ուսանել զճշմարտութիւն եւ զգիրս մեր սրբեացուք ի մոլորութենէ»⁵¹:

ՀՍ.ի Ժողովին կողմէ դիւսաւոր դժուարութիւնը այն էր՝ այս թեկնածուները Ուրբանեան վարժարանին մէջ ընդունելու, որ անոնք մեծահասակ էին, մինչ վարժարանին ուսումնական ծրագիրը «կիմնազ»ի ընթացքով կը սկսէր, պատանիներուն սահմանուած. միւս կողմէ ալ հարկ էր ընթացք տալ այս խանդավառ հայ երիտասարդներու խնդրանքին. ուստի Ս. Ժողովը դիմեց Լեհաստանի Թագաւորին, առաջարկելով բանալ իր Պետութեան սահմաններուն մէջ, Հայերուն համար դպրանոց մը. եւ կամ դոնէ ընդունիլ ա'յն թեկնածուները՝ որոնք Ս. Ժողովին կողմէ պիտի առաքուէին, առ այժմ տասներկու անձ, նպաստ մըն ալ սահմանելով անոնց՝ որ կարենային գլուխ հանել իրենց ուսումները⁵²:

Եւ ահա 1637 թուականի Դեկտ. 12ի նիստով, Ս. Ժողովին մէջ կը զեկուցուի Հ. Պիրոմալլիի ուրիշ մէկ դրութիւնը, որով կը ծանուցուի թէ Կիրակոս Վրդ. եւ երկու հայ ուսանողներ մեկնած են դէպի Լվով: Նամակագիրը ինքն ալ կողմնակից է որ Ս. Ժողովին Կարդինալներուն ծրագրած հայ վարժարանը կամ Գօլէժը ո'չ թէ Հռոմ բացուի, ինչպէս նախատեսուած էր Գրիգոր ԺԳ. Պապին կողմէ, անոր «Ecclesia Romana» կոնդակով, այլ հոն՝ ուր կար հայ Ժողովուրդ: Տեսակէտ՝ որ սկիզբէն ի վեր սեփական եղած է Հ. Պիրոմալլիին:

Երեք աշակերտները, այս նամակին համաձայն, էին Կիրակոս Վրդ. եւ իր եղբայրը՝ Կարապետ, ու Ոսկան, սահմանուած՝ հիմնարկութեան կորիզը կազմելու⁵³:

Հ. Պիրոմալլի 1654 թուականին Հռոմ ներկայացուցած իր «Կեանսագրական գիծեր»ուն մէջ (Curriculum vitae), ակնարկելով Կ. Պոլսոյ 1637ի իր անցուղարձերուն, ի մէջ այլոց կը գրէ նաեւ՝ թէ յետ տասներու թրջ ամիս Կ. Պոլիս մնալու, ու հոն ալ քարոզելու, 1638ին Լվով անցած է, Տէր Ոսկանի, Պալասանի ու Տէր Զաքարիայի հետ:

51. AP, Lettere diverse lingue (1631-45), v. 180, f. 287-287v.

52. AP. Acta, v. 12, f. 331, n. 39.

53. AP. Acta, v. 12, f. 424, n. 23, տե՛ս նաեւ Lett. Volg.

1637 Յուլիս 22 թուակիր նամակը, ուղղուած Ս. Ժողովին կողմէ՝ Լեհաստանի Առաքելական Նուիրակին, որուն յանձնարարուած են մասնաւորապէս Կիրակոս Վրդ. եւ Ոսկան:

Կը յաւելու թէ Պոլիս թողած են Տէր Կիրակոսը (Երեւանցին) եւ անոր եղբայրը՝ Կարապետը, հայրերնուն հետ, թէ՛ այն հոգեւոր բարիքին համար՝ որ անոնք հոն կ'ընէին, եւ թէ՛ յուսալով որ Տէր Կիրակոսը Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռին կարենայ արժանանալ. ինչ որ որ ալ եղաւ արդարեւ⁵⁴:

(Շար. 2)

ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ

54. AP, SC - Armeni, v. 1, 21-32.

Նկատելի է Հ. Պիրոմալլիի նախատեսութիւնը՝ Կիրակոս Վրդ.ին Կ. Պոլսոյ Աթոռին վրայ պատրիարքանալու մասին, որ իրականացաւ 1641ին:

Կը թուի թէ Հ. Պիրոմալլիի վերջին որոշումը եղած է Կիրակոս Վրդ.ը Պոլիս թողուլ, թէեւ 1637ի Դեկտ. 12ին ՀՍ.ի Ս. Ժողովի նիստին մէջ նկատի առնուած զեկուցումին համեմատ՝ Տէր Կիրակոս իբր արդէն մեկնած կ'ըսուի դէպի Լվով, հայ ուսանողներու հետ: Թերեւս դէպքերէն տասներկեց տարի ետք գրուած Հ. Պիրոմալլիի Յուշերուն մէջ տրուած այդ տեղեկութիւնը՝ յիշողութեան վրէպում մը ըլլայ: